ՅԱՒԵԼՎԱԻԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Февраля 1880 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб ул. д. № 5.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԻ ՊԱՏԿԵՐ ՆՈՐԱ ԲՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՈՐԱ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

ՇՎԷՅԳԵՐ – ԼԷՐԽԵՆՖԷԼԴ[1])

I

ԱՐԱՐԱՏԻ ՆԱՀԱՆԳԸ

Արարատի շուրջը։ — Բայազիդ։ — Մինչև Կարս։ — Հայկական քաղաքակրթութեան վայրերը։ — Հայերը ազգայ կարդում։ — Կաթողիկոսարան Էջմիածնի։

Փոքր-Կովկաս անուանեալ լեռան հարաւակողմը՝ Երևանի մօտերից սկսած՝ Արաքսի երկու ափերով տարածւում է մի հիանալի դաշտ։ Հսկայ լեռները, որպիսիք Եւրոպայում անհուն դաշտերով բաժանուած են միմեանցից, այստեղ խիտ առ խիտ կանգնում են իրար կողքին և գրեթէ շրջանակաձև ցանկապատում են ծաղկաւէտ և հացաւէտ հովիտներ։ Հիւսիսում հսկայ Արագածը (12,000 ոտ բարձրութեամբ), արևելքում Խ–ղէկէն (11,000′), արևմտքում Կօղնօ–ր (8,000′) և հարաւում՝ հանգած հրաբղխային Արարատների զոյգ կատարները, որոնցից արևմտեանը իւր 15,800 ոտ բարձր ձիւնեղէն շղարշն տակից ձգում է իւր հայեացքը հիասքանչ տարահարթի մէ-

---

1) Armenien. Ein Bild seiner Natur und seiner Bewohner. Von Amand Frhrn. v. Sehweiger-Lerchenfeld. Jena 1878.

բողջ տարածութեան վերայ : Ինչպէս Սիւնայն ասիական ցամաքի հարաւային-արեւմտեան, այնպէս եւ այսուհետ Արարատը Իրանի եւ Տորին-Ասիոյ սահմանագլխի վերայ սահմանաքար է մարդկութեան եւ կրթութեան պատմութեան. տիեզերքի մի բարձրագոյն նուիրավայր . . . Նորա ստորոտում գեղեցիկ զեռեղուած Երեւանից՝ անցկենալով Արաքսի պարարտ դաշտերով՝ համարեա ձիշտ հարաւային ուղղութեամբ հասնում ենք լեռան զանգուածին, որոյ հիմնական առաջին ասպարէզների վերայ մի ուրիշ աշխարհ է բացւում ձմեռնապարհորդի առջեւ : Մշակութիւնը հետզհետէ անհետանում է, միայն տեղ տեղ լեռան լանջերում կպչում են հատ հատ ծառեր եւ ահագին ժայռերի միջոցներում նուազ բոյսեր երեւում : Այս տեղ գետինը ամենուրեք ծածկուում է վաղուց հանգած լաւայի կղկղանքներով : Բարձր՝ անհուն կապոյտ երկնքում փայլում են երկու հսկայ գագաթների սառոյցապատ եւ ձիւնապատ կատարները, որոց միջեն ձորը թէպէտ անցք է կոչւում, բայց երբէք ձմեռապարհորդի ոտք չի կոխում : Այս իսկ ձորումն է նաեւ Ս. Յակոբի վանքը, որ վերջին մեծ երկրաշարժից կործանուեցաւ [1]) : Սակայն այսպէս չէ այն միւս անցքը, որ մի գերմանական մղոնից աւելի երկարութեամբ հիւսիսից հարաւ ձգուում է Մեծ Արարատի եւ Պամբուշի միջով : Սա հազիւ թէ 6,000 ոտ բարձրանայ, եւ համեմատաբար չունի այնքան երկիւղալի շերտեր ու ձեղքեր : Բայց եւ այնպէս դարձեալ վտանգաւո՛ր անցք, թէեւ ոչ առանց մեծ դրաւչութեան, որով հսկայ լեռան մշանջենաւոր ձիւնով ու սառոյցով պատած գագաթի տեսքը հրապուրում է անցորդի աչքը : Այս լերան հիւսիսային լանջը, ուր բեմն ա՛յն, որ մոխիկ է տալիս Արաքսի հովտի վերայ և դէպի Երեւան, ներկայացնում էր մի ժամանակ մի զարմանալի արշաւանքի տեսարան : Ծանրապէս բեռնաւորուած մի խմբիկ շատ օրեր աշխատեցաւ այդ հսկայ լերան գագաթը բարձրանալու : Նոքա սոսկում էին իւրեանց ճանապարհը քանիցս անգամ ընդհատելու, բայց նոցա ոյժերը կարծես թէ չէին ուզում սպառիլ . թանձրախիտ ձիւներով, սառոյցով ու ժայռերով շրջապատուած այս կամ այն տեղ

1) Մոլեկն Խորենացու խօսքով՝ այս վիհերուն վայրումն էր, որ Արտաշէս Բ. յանդուգն Թագաւորը (129 — 136 յ. Ք.) նոյնպէս անդունդ կործանեցաւ, որից անշուշտ բնութեան մի երեւոյթ պիտի եղրակացնել : (Տես Hermann, «Das russische Armenien», 15):

ռաժի վերայ գիշերելու վտանգն անցկացնելուց յետոյ՝ վերստին սկսում էր աշխատութիւն։ Վերջապէս, սոսկալի բուքից տանջուած՝ ոտք գրին գագաթի վերայ, ուր և իւրեանց բեռը ի գործ գրին նախանշանակուած որոշման համեմատ։ Դա մի ահագին սև խաչ էր, որ իւր քառակիր ունենալով ձիւնեղէն սպիտակ պատուարը՝ մինչև անգամ եղմիածնից կամ Երևանից կարող էր նշմարուիլ։ Սառոյցի մէջ երկու-ոտնաչափ խորութեամբ մի փոս փորելով՝ նորան այնտեղ տնկեցին, սառոյցի կտորներով ամրացրին և ձիւնով պարսպապեցին։ Նորա վերայ գամուած կապարեայ թիթեղը հետևեալ արձանագրութիւնն էր կրում. «Նիկոդայոս Կայսրի հրամանով շինուած 1829-ին»։ Ս. յն ժամանակուայ բարօմետրի հաշուով խաչը 15,138 ոտ բարձրութեան վերայ էր կանգնած, ուրեմն Մօնբլան-գագաթից երեք հարիւր յիսուն ոտնաչափ բարձր [1]։

Արարատի գագաթը, որի վերայ՝ ըստ Աստուածաշնչի առասպելութեան՝ հանգեաւ Նոյայ Տապանը, փոքր ինչ դմբեթաձև է՝ մօտ 200 քայլ շրջապատով։ Ուղղորդ են մանաւանդ հարաւային և հիւսիսային արևելեան կողմերը։ Հետաքրքրականների մէջ անշուշտ ամենահիանալին այն է, որ այս՝ տիեզերքի լեռների նախահօր մշտասառոյց գագաթից բացուում է մարդուս աչքի առաջև։ Արաքսի ամբողջ երկարաձիգ դաշտը հանդիսատեսի ոտից ներքոյ է, Նրևան, Սարդարապատ և այլն բնակավայրեր այլևս առանց հեռադիտակի դժուար թէ ճանաչուին։ Հարաւում տեսնուում են Բայազէտի սառը լեռները, քաղաքը նորան շրջապատող դաշտերով և շատ կամ քիչ անկանոն մեծամեծ կատարներ, որոնք նման են հրաբուխների և անջատուում ձորերով, կամ միանում բլուրներով։ Հետուն՝ դէպի հիւսիսային արևմուտք տեսնուում է երկար ժամանակ անկանելի համարուած Արագածի պերճափառ գլուխը, հիւսիսային արևելքում՝ համարեա 6,000 ոտ բարձրութեան վերայ՝ փայլում է Սևանայ ջրի մեծ մասը, և մինչև անգամ նորա հեռի ափային շղթայն էլ նշմարուում է աչօք լոյսի միջով։ Անմիջապէս արևելքում մոխրագոյն անուում Փոքր Արարատի գագաթի վերայ, որ ոչ թէ իւր մեծ եղբօր պէս լերկ է, այլ թէ եղերքում ու մէջ տեղեր սեպաձև ժայռերով և քարակոյտերով պատած [2]։

---

1) Parrot, «Reisen», I, 138 և հետևեալ։

2) Մնջակս Հաբանի, Հօբի և Սինայի գագաթների վերայ, այսպէս էլ Փոքր

Այժմ մենք հարաւային կողմից ներքև ենք իջնում, և պատահում Բայազէդի գորշագոյն տներին։ Հազիւ թէ վերծանուն տարի առաջ այստեղ դեռ կեդրոնատեղի էր բոլոր այն անկախ քուրդ ցեղերին, որոնց երեսից վտռտհամբառուած էին Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանամերձ գաւառները, և ճիշտ այնքան միջոց է, որ անարգուած Բայազէդի վերայ սկսել են խօսիլ։ Այն պատմութիւնը, որ խօսելու առաջին առիթը տուաւ, թէպէտ բաւական բանաստեղծական է թուում, բայց և այնպէս Արևելքումն այն ժամանակ այդպիսի դէպքեր հնարաւոր էին, մանաւանդ այն ցեղերի մէջ, որոնք դեռ մինչև այսօր էլ իսկապէս ենթարկուած չեն որևէ իշխանութեան, և իւրաքանչիւր հովտում, իւրաքանչիւր լեռան գլխին, և իւրաքանչիւր բարձրավանդակ խորշերում ապաստանած իրանց բազկի ուժին հրամայում են։ Նապոլէօն Ա. որ, ինչպէս արդէն յայտնի է, մտադիր էր Ռուսաստանի վերայ արշաւել, որպէս զի մի աղեքսանդրեան արշաւանքով մինչև Սարմատական դաշտերի խորքերը թափանցելով՝ իւր պատերազմական փառքի վերայ մի փայլ եւս աւելացնի, անխոնջ աշխատում էր Ռուսաստանի և՝ այն ժամանակ դեռ փոքր ինչ պատերազմական Պարսկաստանի մէջ քաղաքական դժուարութիւններ յարուցանելու, որպէս զի այսպիսով Թշնամու զօրքից մի մասը ուրիշ տեղ գրաւեցնի և այս բանիցն ինքն օգուտ քաղի։ Բայց այսպիսի քաղաքական դատապրութեանց համար հարկաւոր էին և պատգամաւորութիւնք, որոնցից մինը Ժոբերին յանձնուեցաւ, որ իբրև դաշտնի գործակատար Կոստանդնուպօլսոյ և Կարնոյ վերայով անարգել հասաւ մինչև Դիադին, ուր Բայազիդից միայն մի օրուայ ճանապարհով այս կողմն էր։ Այն ժամանակուայ քուրդ գլխաւորի Մահմուդի՝ վատ համբաւից թէպէտ ուրուած՝ լաւ համարեց հեռու մնալ քաղաքից, բայց և այնպէս նորանից միայն երկու մղոն դէպի հարաւ իւր վինուորական ուղեկից համբով միատեղ, որ բաղկացած էր ծպտեալ Ֆրանսիացիներից, մի ուրիշ գլխաւորի մատնութեամբ

Մասին զազաների գտնուում են մահմետականաց վերաբերմունքը. որովհետև մահմետականն Արևելքում քան կարելոյն քաջքը Թաղուելը վշտ եւ անեղապէն լուծ էր և է տակաւին։ Փոքր Մասին գազաների մահաբաններից մինի վերայ հետևեալն է կարդացուում. «Աստուած, քո ողորմութիւնը Մահմեդի վերայ լինի։ Այն վերաբերմանն շինող Օսմանը գրեց այս Շեյխ անունն 550-ին (քան քրիստոս Թուականին (?). Փրկչի 1292-ին)։ Տես Ritter, «Erdkunde» X)։

ձերբակալեցաւ և քշուեցաւ Մահմուդի մօտ[1]: Թէպէտ այս անյայտ քուրդ բռնաւորը իւր որջումն՝ Բայազիդի ամրոցում՝ ձեւանում էր Բ. Դրան կէս-անկախ վասալ, բայց և այնպէս ստիպուած էր ծօբեւրին ուղեկիցներին ուղարկել Երևանի պարսիկ իշխանի մօտ, որ և արդէն կալանաւորի ցանկացած բանն էլ այդ էր: Բայց բռնաւորի այս կամքը կեղծ էր. որովհետև մինչ օտարականները հաղիւ թէ Ախարատի ստորոտը հասել էին, յանկարծ նոցա վերայ յարձակուեցան, կապկպեցին և կապած աչքերով դարձուցին Բայազիդ: Ոգորմելիները հաւատացնում էին թէ միայն զգուշութեան համար է, որ նոցա այս կերպով են տանում Երևան, որպէս զի անցկացած երկիրը չտեսնեն, այն ինչ նոցա իսկապէս իրանց առաջին բանտն էին վերադարձնում, ուր նոքա մեծամեծ վիշտերի հանդիպեցան... Այստեղ սկսում է միջանկեալ վէպը: Այս երկրների յաւիտենական պատուհասը, որ այսօր էլ դարձեալ թափել է նոցա վերայ, ուզում եմ ասել ժանտախտը, յանկարծ վրայ հասաւ և իւր զոհերի հետ տարաւ նաև բռնաւոր Մահմուդին: Նորա յաջորդը «Ֆրանկներին» արդէն մահուան էլ պատապարտել, բայց դեռ վճիռը չէրագործուած ախորը նորան ևս յափշտակեց և Մահմուդի եղբայրը ցեղապետ կոչուեցաւ: Բայց այս միջոցներին, ինչպէս երևում է, կալանաւորուած-ներից մինը բանտապետի կնոջը գրաւած է եղել, որովհետև սա օգուտ քաղելով ընդհանրական շփոթից՝ գաղտնապէս մի թուղթ հասցրեց Երևանի կուսակալին, որ և իսկոյն բանտարկուածների ազատումն պահանջեց: Այսպէս ծօբերն ու նորա ընկերները քառասնօրեայ բանտարգելութիւնից յետոյ, մահու և կենաց տագնապի մէջ հասան Տրապիզոն, ուր և վերջացաւ իրանց անյայտ պատմաւորութիւնը:

Մահմուդի որդի Բելուլի ժամանակն էլ հանգամանքները միևնոյնը մնացին այս աւազակաց երկրում: Նորանից մնացել է նաև Բայազիդի քարափի վերայի ամրոցը, ուր նստում էր Արտատի հպատակողման երկրին իշխող քուրդ ցեղապետը: Թէ Արևելքում ժողովուրդը իրաքանչիւր իշխողի բռնաւորութեան ներքև՝ լինի նա պետական օրինաւոր իշխանութեամբ կամ լինի նա մի ապօրէն ասպատակապետի հրամանով, միշտ միևնոյն վիշտերին է ենթակայ, ապացուցանում են այն հանգամանքները, որոնց մէջ գտնուում էին քուր-

1) Ritter, a. a. O. 340 u. ff.

դերը Մահմուդի իշխանութեան օրով։ Նոքա, որոնք սովորաբար ոչ մի ձնշման չեն ընտելանում, այլ միայն իրանց կոպիտ բնական ապրելակերպութեան և մանաւանդ անձնական ազատութեան ձգտման են հետևում, այնպիսի նուիրական ծառայութիւն մատուցին իրանց պետերին, որպիսին ոչ առաջ և ոչ յետոյ մատուցին մի որևիցէ իշխանութեան կամ իրանց պետերից մէկին։ Մահմուդը թողել էր իւր առաջին ամրոցը, որ քաղաքի միւս կողմն էր շինուած երկայնաշար շտեմարաններով և կիսով չափ թափկացած քարանձաւների մէջ, և իւր մարդկանց ձեռներով մի նորը և ճոխագոյնը շինել քարափի վերայ՝ բանտի դէմ-դէմը [1]։

Ոսկեօձ և բազմագունի նկարներով շողշողում էր ապարանքը, որից սրտառուչանից երևում էր Հայաստանի ամենահրաշալի վայրերից մինը։ Ընդարձակ բակի միջի կամարներն ու հովանոցն տաղաւարներն այս աւազականոցին ճիշտ հանգստավայրի կերպարանք էին տալիս։ Կանանոցի և նորան կից բանտի մէջ հազարապետութեան ճանապարհ կար, որից իսկ վերջանում է առնել Փօքերի և նորա ընկերների հրաշալի ազատութեան թեզի ծայրը։ Ինքնին հասկանալի է, որ պալատը իշխում է քաղաքի վերայ, բայց որովհետև շրջակայ բարձունքն էլ նորա վերայ են իշխում, այս պատճառով թէ 1828-ին և թէ այս վերջին պատերազմին Քուանների ջղաժուռթացան ամբողջ դիրքը կարճ կտրուից յետոյ ձեռք բերելու։ Բեզուլը, որ 1828-ին իբրև Թուրքի փաշայ և Դրան կէս-ստորագրեալ իշխում էր Բայազէտի մէջ, քաղաքի բնակիչներից մեծ մասի հետ փախաւ Հարաւային լեռները, իսկ ողբալի խրճիթների մէջ մնացողները ենթարկուեցան ժամանակին, որ այն ժամանակ սարսափելի կերպով ձարակել էր այդ աւազականոցում։ Այսպէս ընկաւ այս քաղաքը մանուանդ երբ Երևանի նահանգը Ռուսաց ձեռքն անցնելով թափուր աշխարհիկ քուրդերի անցուդարձը բոլորովին կտրուեցաւ Հայաստանի այս մասից, և Պարսկաստանը Պասկևիչից յաղթուելուց յետոյ այլևս չէր կարող քրդերին որևէ կերպով օժանդակ լինել [2]։ Յետոյ Հայերն էլ դաղթեցին այնտեղից, և մնացին այնուհետև այն կէսդատ խրճիթների մէջ՝ շրջապատուած աղբերով ու գերեզման-

1) Տես I. Brant. «Notes of a journey through a part of Koordistan», 1. c. 420 և հետևեալ։

2) Տես Ritter, a. a. O., X.

ներով՝ միայն վայրենի և չարաճճի սինդքորները, հաշտակուաճ ար-
բիւնարբուների և աւազակների մի անխառն վհմակ:

Բայազդի դաշտը պատերազմական շատ յարմար կեդրոնավայր
է: Սրիք մըն լայնութեամբ դէպի հիւսիս տարածուելով հասնում է
մինչև Արարատը, որի առանձնացած երկձիղ դլուխը մոխիկ է ամում
նորա վերայ: Ա յս տափարակը ամէն կողմից ծածկուած է հրաբըղ-
խային ժայռերով ու վխրաքարերով[1]), որոնք կենդանի վկայ են այդ
ամբողջ երկրի հրաբղխային բնութեան, որ քանիցս անգամ էլ սար-
սափելի երկրաշարժութեամբ երևան եկաւ: Եթէ այս պատահական
սարսափելի երևոյթների վերայ աչքացնենք նաև 6,000 ոտ բարձ-
րութեան համապատասխան և համարեա վեց ամիս տևող ձմեռը,
բուքը, ցուրտը և հազար տեսակ դժուարութիւնները, այն ժամանակ
կը տեսնենք, որ այս երկիրը արժանի է իւր բնակիչներին, որոնք
նորան աւելիևս են վատացնում քան, որքան բնութիւնից է. . .
Չնայելով բոլոր այս հանգամանքներին Բայազիդը զինուորական մեծ
արժանաւորութիւն ունի, արժանաւորութիւն, որ միայն Թուրք
զօրապետների պէս ռազմագէտներին անհկատելի է: Միայն Բայազիդի
հովիտն է, որ բաց ի Կարնոյ հետ ունեցած բնական հաղորդակցու-
թեան ձանապարհից — վաճառականական գլխաւոր ձանապարհ —
ունի նաև յարաբերութիւն Վանայ լճի և Տիգրիսի աւազանի հետ,
և բաւականին լաւ ձանապարհով: Հռովմայեցիք առաջին անգամ
նկատեցին այս իրողութիւնը, որից և, որչափ կարելի էր, օգուտ քա-
ղեցին: Տացիտոսը այս երկրին, որտեղից Կօրբուլի հռովմէական զօրքը
Արտաշատի վերայ արշաւեց, կոչում է Taurantium, «Տաւրոսի
մուտք»[2]), ահա մի անուն, որ նորա ռազմագիտական նշանակու-
թիւնը լիովին ցոյց է տալիս: Սորա սահմանում պատերազմ մղելու
մի ուրիշ նպատակն էլ իւր հօտերի վարձանօթ բազմութիւնն է:
Եփրատի արևելեան աւազանի հիանալի մարդագետինների վերայ ա-
մէն տեղ ոչխարների և այծերի հօտերի ես պատահում, որոնց
թիւը շատ անգամ հազարների է հասնում: Բայց դոցա լիովին
տէր ծնելու համար մինչև այսօր պէտք է եղել խորին խաղաղու-
թեան ժամանակներին անգամ, բազմաթիւ անձանց պաշտպանու-

---

[1]) Տես Parrot. «Reisen» I, a. a. O.

[2]) Mannert, «Geogr. d. Griech. u Röm.» V. 2, 228.

թիւն, որովհետև այդ լեռնականների հարստահարութեան ներքոյ իւրաքանչիւր կենդանին, այսպէս ասել, առանձին պահապանի պէտք ունի, և ոչ ոք, կ՚ուզէ՝ թէ բարեկամ կամ թշնամի էր եղել իւր դրացուն, չէր կարող վստահ լինել իւր դոյքին:

Գալով Բայազիդի արևմտեան կողմի քուրդ ցեղերին, պէտք է ասել, որ նոքա ամէնքն էլ, առանց բացառութեան, սկզբից՝ ի վեր Բ. Դրան հետ միշտ կռիւ ու վէճ ունին: Բայց Ռուսաստանը իմաստուն պատշաճ քաղաքականութեամբ վարուել այս սահմանամերձ անվստահելի հերոսների դէմ [1]): — Այս վերջին Ռուս-տաճկական պատերազմի կողմնակի դէպքերից բաւական ապացուցուեցաւ, թէ Կովկասեան կառավարիչները ինչքան են չարչարուել սահմանապահ քուրդերին մի կերպ գրաւելու համար. մի քաղաքականութիւն, որին հանգամանքները զգալի կերպով նպաստեցին, որովհետև ոչ Պարսիկները և ոչ Թուրքերը այնպէս վարուեցան այս թափառական վայրենի ցեղի հետ, որ կարողանային նորան հլու բարեկամ անել իրանց: Բ. Դուռը երբ մօտ երեսուն տարի առաջ այն կապիտ սխալն արաց, այսինքն Ռեվանդիզի ցեղապետին Կոստանդնուպօլսից վերադառնալիս դաւով սպանել տուեց, դորանով նա իսպառ ջնջեց լեռնականների համակրութիւնը, հետևաբար սոքա էլ մնասանդ Ռուսաց սահմանների վերայ, սկսեցին Ռուներին համակրութեան նըշաններ ցոյց տալ — բայց թէ արդեօք անկեղծաբար. դա դեռ յայտնի չէ: Այս ինքնակամ բարեկամութեան վերայ Ռուսաստանը յայտարարել թէ ինքն բոլորովին յօժար է թոյլ տալու դանազան ցեղերին սահմանի այս կողմն անցնելու՝ դաղթականութեան այն արտօնութեամբ, որ նոքա՝ ի հարկին կարողանան երբեմն երբեմն իրանց հայրենիքի մարգերը դառնալ, ուր, մինչև անդամ տաճկական սահմանում, Ռուսաց պաշտպանութեան ներքոյ միալու են: Թափառական կեանքը հարկաւոր է երևցնում մի այսպիսի զարտուղութիւն — Ռուսները հասկացնել տուին քուրդ ցեղապետին —, բայց ներքուստ միայն մի խորհուրդ կար, այն է, տաճկական ազդեցութիւնը, կամ լաւ ևս, նորա թոյլ ստուերը իսպառ ջնջել: Այս վերջին պատերազմից փոքր ինչ առաջ Դուռը այնու ամենայնիւ մի քանի ձիգեր թա-

---

[1]) Տես A. E. Macintosh, «Reise U.» K. Koch, «Die kaukasischen Länder», 237.

փեց այս անբնական երևոյթը խափանելու, որոյ հետևանքն այն եղաւ, որ մի քանի ցեղեր տաճկական իշխանութեան դիրկ վերադարձան, ինչպէս, օրինակի համար, Զելլոյից (նաև Զելանցւոց) քաջամարտիկ ցեղը. . . .

Բայազիդից դէպի արևելք գնալով մենք կը հասնենք սոյն նահանջը: Ճանապարհն անց է կենում երկու ահագին լեռների միջով, հիւսիսից այն դօսին է, որ Արարատից սկսած զանազան անուններով՝ երկայնութեան երկու աստիճանաչափ տեղ պատում է արևելեան Եփրատը (Մուրատ), իսկ հարաւից՝ Վանայ բարձր աւազանի պատուար կազմող շղթաները, նոյնպէս ապատամնատան աւազակ քուրդ ցեղերի, որոնք սիրում են 10,000 ոտ բարձր Ալադաղի և 11,000 ոտ բարձր Խօրի կրճով արշաւել Վանայ դաշտերի, մանաւանդ հայ գիւղերի վերայ: Այսպէս ահա լեռնային այս ահագին լաբիրինթոսի մէջ գոյութեան դէմաւոր դերը խաղում է արիւնալի անվերջ թշնամութիւնը: Թափառականները քարձր լերան գիշատիչ գազանների պէս փոփոխում են իրանց գործողութեան ասպարէզը համաբեր ժանտացանելի կրճերի այս և այն կողմը, երբեմն մեկ հովտին և երբեմն միւսին պատուհաս դառնալով. . . Շարունակելով մեր ճանապարհը այս լեռների միջով՝ իսկոյն հասնում ենք արեւելեան Եփրատի աղբերականց: Այն ընդարձակ հովիտներում, ուր ըստ մեծի մասին ձոխ մարգագետինները [1]) շքջապատում են բազմաթիւ գիւղերի, վոխոջում են անհամար առուակներ, որոնք քամում են ձիւներից, և այս վճիտ ջրերի վերայ է, որ հանգչում են այն անհանգիստ թափառականները: Պէտք չէ նաև մոռանալ, որ այս խառն ի խուռն բնակութեան միջով անց է կենում կարաւանի ճանապարհ, որով ամէն տարի քանի անգամ անցուդարձ էին անում հարուստ բեռնաւորուած կարաւաններ Տրապիզոնից դէպի Խաբրիզ՝ Առաջատակաւոր այս պարսկական վաճառանոցը: Ահա՛ մի ուրիշ պատճառ էլ ազահ լեռնականներին՝ իրանց այս բնակավայրը մի փոքրիկ էլ-դօրադօ համարելու:

Այս աւազանի կեդրոնից ձիշտ դէպի հիւսիս դառնալով՝ վերոյիշեալ գօտին դեռ մեր առջևն ենք տեսնում. բայց ձիւնապատ կատարների մէջ նկատում է մի կիրճ՝ «Շահելօի» անունով մի անց-

---

[1]) Տե՛ս Eli Smith, Miss. researches etc., 423.

հաւանականաբար՝ մին այն հնագոյն ճանապարհներից, որոնք արդէն ասորական տիեզերակալութեան ժամանակ՝ Եգէական ծովից մինչև Ինդուսը, Պոնտոսից մինչև Պարսկական ծովը ամբողջ սաոլին և միջին Ասիայի միջով անց էին կենում։ Այսօր այլևս չէ անց կենում այնտեղով արքունի ճանապարհ, այլ մի ոլորմելի շաւիղ ահագին ժայռերի վերայով և սոսկալի վիհերի առջևով կամ մեթ անտառի միջով[1])։ Միայն տեղ տեղ են պատահում աւրօտաւեղերը, որոնց վերայ հաստատել են կասկածելի քուրդ խմբեր իրանց վրանները։ Աւրդէն ինքն ըստ ինքեան մեր դժուարին ճանապարհի վերայ տեղի ունեցաւ մի խիստ անհաճոյ դադար։ Փոքրիկ կարաւանը իր ամբ ընթացքում յանկարծ կանգ առաւ, քուրդերը իրանց ձիերի քամակը թուան և խուռն ամբոխով ճօճայնում էին իւրեանց տէրը։ Միայն օրովհետև մեր պահնորդ խումբը թուով աւելի էր նոցանից՝ հնարաւոր եղաւ անվտանգ անց կենալ այս աւրօտավայրերը, ուր թէպէտ բնութիւնը այնքան հրաշալի, բայց մարդիկը այնքան ողորմելի էին. եթէ պահնորդ խումբը չէր ունեցել առաւելութիւն, անպատճառ արիւնհեղութիւն կը լինէր և աւելի ևս, ինչպէս խորշերի մէջ թաւթափած մարդկանց և ձիերի կմախքը վկայում էին։ Այս դժոխային դուռն անց կացար թէ չէ՝ և ահա Հայաստանի ամենավեհ տեսարաններից մինը քո առջևն է։ Ճիշտ դէպի հիւսիս տարածւում է Ճանապարհորդի առաջ կեդրոնական Հայաստանի տաւ փարակը, մի ծառազուրկ սարահարթ, որ տեղ տեղ ընդհատւում է բլուրների շղթայով կամ սրածայր ժայռերով. իսկ սոցա շուրջը պատում է լեռների, զօրիների, ժայռերի քարեղէն ծովը ընդհատուած ահագին գոներով — այսինքն Ճորոխ, Կուր, Արաքս և Ախուրեան գետերի հովիտներով։ Լաւ ղեկահաւորուած աչքը այս հայեցակէտից պէտք էր որ նկատէր թէ Կարն և թէ Ալեքսանդրապօլ՝ առաջինը ճիշտ հիւսիսում, իսկ երկրորդը հիւսիսային արևելքում։ Ոչ մի բարձրութիւն չկայ մեր առջև, որ արգելք լինի տեսութեան, միայն այս տափարակի հիւսիսային եղերքից թանձր գոլշլիքը կարող էին քօղաւորել Թուրքի հինաւուրց մայրաքաղաքի պալատները կամ Ալեքսանդրապօլի պատուարները։ Անմիջապէս ներքև ամենայն ինչ անկենդան և ամայի է երևում։ Ոչ մի գետ,

---

[1]) Macintosh, a. a. O. (տե՛ս Koch, 216 — 224).

ոչ մի առու, բացի մօտից անց կացող Երասխից, չի շողշողում այդ մրակերպ տափարակի վերայ, մինչև անգամ բնակութիւնների դիրքն ու տարածութիւնն էլ հեշտ չէ որոշել։ Եւ երբ իջնում ենք այն ծառազուրկ սարահարթի վերայ, այն ժամանակ արդարև պարզ ւում է մեզ, թէ ինչի հեշտ չէր նկատել այդ շէնքերը, որովհետև Հայը սիրում է գետնափոր բնակիլ, կամ աւելի ճիշտն ասած, շինութեան փայտի պակասութեան պատճառով նա ստիպուած է այդպէս անելու։ Տեսարանը այսպէս շարունակւում է մինչև յանկարծ բացւում է մեր առջև Կարսայ գեղը իւր ժայռոտ ափերքովն և ամրոցապատ կատարներով ու սանդուղքներով, և մեր աչքին ընկնում է հռչակաւոր Կարսայ գարևանդի վերայ։

Տաճկական այս ինկած ամրոցի պատմութիւնը իւր սկիզբն առնում է շատ վաղ ժամանակներից յառաջ քան թէ Օսմանեան շրջանը։ Կարս քաղաքը արդէն ամենահին հայ մատենագրներից յիշատակւում է, բայց երևում է որ իւր ներկայ անունը Բիւզանդացոց օրոք ընդունած լինի, և նոքա սորան Հայաստանի մայրաքաղաքներից միևն էին համարում, ինչպէս և իրօք էլ էր, որովհետև Բագրատունեան հարստութիւնը, ինչպէս յայտնի է՝ ամենահին քրիստոնեայ թագաւորական ցեղերից մինը, համարեա ամբողջ կէս դար «Մեծին Հայաստանի» այս մայրաքաղաքում դահակալեց։ Կարուց թագաւորութեան վերջին ինքնակալ իշխան Գագիկ Բ.-ի օրով՝ տասնմէկերորդ դարու երկրորդ կիսում քաղաքն ու տէրութիւնը Բիւզանդացոց ձեռն անցաւ [1]), և այն օրից սկսած Կարսայ բազդի ու պատմութեան աղբիւրների մեծ պակասութիւն է նկատւում։ Սելջուքները, որոնք, ինչպէս յայտնի է, ամէն տեղ բիւզանդական ժառանգութեան գլուխն անցան, սիրեցին նաև այս պարսկական և վրասկան սահմանապահի ամրոցին, բայց հաւանական նաբար կարճ միջոցի համար, որովհետև Մոնղոլական հանճարակ հեղնդը Հայաստանի առանձնացած և սակաւաթիւ երկրներին էլ չը խնայեց, և իւր նոր տէրութիւնը հրով ու սրով հաստատեց։ Վերջապէս քաղաքն Օսմանցոց ձեռն անցաւ, որ ժամանակից և ստացաւ իւր նշանակութիւնը իրրև սահմանաբերդ, որովհետև Սուլթան Մուրատ Գ-ն էր որ երեք դար առաջ (1579) առաջին ամրոցները

---

[1]) St. Martin, Mémoire sur l'Arménie I, a. a. O.

հիմնել տուեց[1]), ամրոցներ, որ իրանց սկզբնական ձևն ու ամրութիւնը պահում են մինչև այսօր։ Նախ և առաջ վերնարերդն է՝ քաղաքի հիւսիսակողմում կարսայ գետի դարափան վերայ՝ հիւսիսային և հիւսիս-արևմտային դիրքայարձակ կողմից պատուած միաչարգ պարսպով, իսկ հարաւային և հարաւ-արևելեան աւելի դիւրամատչելի պառեկների կողմից՝ երկու կարգ պարսպով։ Սոյն պառեկների կողքին կարճ ու կարուկ աստիճանների վերայ շինուած է այդ հինաւուրց և՝ իւր անցեալով՝ արդարև կլասիկական քաղաքը, բովանդակելով իւր մէջ ըստ մեծի մասին խիստ բարձր և բազմայարկ տներ, որոնք հեռուից ամենագեղեցիկ քաղաքի պատկեր են ներկայացնում, բայց մօտից՝ ի հարկէ ուրիշ կերպ է. մութ ու մռայլ քարերից շինուած այդ զուլ տները բաժանւում են իրարից ամենանեղ փողոցներով. ձմեռրիտ ականատներ են դրքա, որոնց մէջ գեռում են բնակիչները, ընտանի կենդանիք, ինչպէս և փողոց-ապականող շները։ Թէ Կարսը երբէք ձմեռրիտ և տեսական ծաղկման հասնելու չէ՝ հէնց այն է պատճառը, որ նա իբրև սահմանաբերդ միշտ ենթարկուել է Արևելքի յարձակող թշնամիներին, մանաւանդ Պարսից և Վրացւոց, և յետոյ Ռուսաց, որոնց՝ ի հարկէ ցանկալի բան չէր կարող լինել այդտեղ ծաղկումն։ Սակայն այն իսկական հինաւուրց պատուարները երբէք հիմնովին չեն խորտակուել, ինչպէս և «անատոլցի եօթն Բէյլեր Բէյերի» եօթն մարտկոցներն, որոնք, ըստ արևելեան մատենագրաց, հեռուհեռէ շինուել են նոցա ձեռքով, մինչև այսօր էլ մնում են։ Սակայն այդ «եօթն մարտկոցներ» անունով Թերևս բերդի պատնէշաձև աշտարակները ակնարկուած լինին, և ոչ երբէք այն արտաքին տարանջատ շէնքերը, որոնցից, ինչպէս յայտնի է, Ռուս-Թուրքական վերջընթեր պատերազմի ժամանակ բաւական կային։ Այն ամուր բերդերից և տարանջատ ամրոցներից շատերը, որոնք այս անգամի պատերազմին՝ այսպէս ասել՝ վարպետութեամբ թշնամու ձեռքն ինկան, շինուել էին միայն Ղրիմի պատերազմից յետոյ, երբ Ռուսների երկիրն առնելովը (1828 և 1855) տեսնուեցաւ, որ հին պատուարները գոհացուցիչ չեն։

Կարսն իբրև քաղաք նշանաւոր անտղը նորա յարմարաւոր տեղն

---

[1]) Hammer-Purgstall, «Gesch. d. osm. Reiches», IV, 76.

Է՝ Հայաստանի, Կովկասու, Քրդստանի, Պոնտոսի և Պարսկաստանի մէջ, վաճառականական մի յարմարադոյն կեդրոն, որոյ յատկութիւնը՝ ի հարկէ Բ. Դրան բանը չէր մինչև այսօր ճանաչել, որովհետև նա, ինչպէս յայտնի է, քիչ կամ ոչինչ փոյթ ունի շահու աղբիւրները հորդելու, որոնք տէրութեան ներքին այժմեան հետևողական բաներ են: Բայց այնու ամենայնիւ Կարան և այս վերջին խաղաղ օրերումը Արևելքի մի փոքրիկ Շոթեքէաքէէ էր, ուր ուղարկում էին իւրեանց ներկայացուցիչներին այն բազմաթիւ ժողովրդները, որոնք տարածուում են Կովկասից մինչև Վանայ լիճը, Անատոլուց մինչև «Արևու աշխարհը» Խորասան: Հողն էլ այստեղ աւելի բարեբեր է քան Հայաստանի միւս տեղերը. սև հողը ծածկում է մինչև անգամ շրջապատող լեռների և շղթաների ստորին ստորձանները, և կլիման, չնայելով նորա հեռաւորութեանը, այնու ամենայնիւ Հայաստանի մեղմագոյն կլիմաներիցն է: Սովորաբար 35 — 40 ստորձան Ցելզիուսին հասնող ամարան հետևում է համեմատաբար երկարագոյն աշուն և միայն Նոյեմբերի մէջն է սկսում ձիւն գալ, որ ձմեռուան մէջերը այնու ամենայնիւ առատութեամբ ծածկում է գետինը՝ Ցելզիուսի չափաչափը զրոյից ներքև մինչև 20 ստորձան հասցնելով[1]): Բայց Կարայ դաշտը զերծ է այն բազմատեսակ տեղական հիւանդութիւններից, որոնց ենթարկուում են նորա սահմանակից գաւառները, չնայելով որ սոցա աշխարհագրական դիրքը շատ աւելի լաւ է նորանից, և նոյն ինքն տարափոխիկ ախտերը հազիւ թէ շօշափում են այս առանձնացած բարձրաւանդակ քաղաքին: Բայց և այնպէս Կարայ շրջականերում խիստ քիչ բնակութիւն կայ. մի ռուսական տեղեկութեան նայելով՝ 5000 քառակուսի վերստից աւելի տարածութեան վերայ հազիւ թէ 300 գիւղեր են գտնուում, կամ 16 քառակուսի վերստի վերայ մի գիւղ (այդ ամբողջ գաւառը Կարսն էլ հետն առած, մօտ 30,000 բնակիչ ունի): Բայց այն սակաւաթիւ գիւղերն էլ, ինչպէս վերը յիշեցինք, իսկապէս աչքի չեն ընկնում, այլ երևում են միայն այրի քարեայ ձակատները: Այս ստորերկրեայ խուռչներում մարդիկն ու անասուններն եղբայրական միաբանութեամբ միասին են բնակում, և միայն մի նօսր փսխաթ, կամ քրդի մի ոտքով գորգ ինչպէս և մի փոքր ապա առաջիններին

[1]) Տես Hamilton, «Asia minor», I, 206.

դատում է երկրորդներից [1]: Լեյսը միայն դունիյն է մանում: Դռները բաւական ամուր են շինուած ոչ նպատակով, որ կարողանան քիւրդերի երբեմնակի յարձակմանը դիմանալ: Թէ Կարսի մի քանի տուրարձաններում էլ շատ այսպիսի ողորմելի բնակարաններ կան՝ երեւում է Ճանապարհորդների եւ տեղեկատուների այլեայլ նկատմունքներից . . . [2]:

Կարսը այս վերջին հարիւր յիսուն տարուան ընթացքում հինգ անգամ պաշարուեցաւ, որոնցից երկուսում յաղթող հանդիսացաւ, այն է 1735-ին Պարսից Նադիր Շահի դէմ, որ 100,000 մարդով եւ բազմաթիւ թնդանօթներով ներկայացել էր բերդի առ-

---

[1]) Ansichten bei W. Ouseley, Trav., III.

2) Այս ազգանուններում դիւանների տակ երբէք չի մաքրուում: Այնտեղ ապրում, սիրում ու ծնում են կատուներ. այնտեղ լոյս են տեսնում հազար միլիոնաւոր լուեր և փակում իրանց աչքերը յաւիտեան. այնտեղ երազում են երկիլիոնաւոր մուկները կեանքի քաղցր երազը: Իսկ գ/շերը՝ Սենեբերիմի զօրքերից էլ մեծ բազմութեամբ արշաւում են իրանց քնական թշնամու՝ մարդու վերայ և ցկատաղութիւն չարչարում: Բայց արեւելցիք իմանում են իւրաքանչիւր օր մի քանի բոպէ իրանց համար հանգստութիւն ձարել: Շօթերը (չաշ), որ հացի և միանգամայն ճեռնոցի պաչտօն են կատարում, եփւում են գետնում իջեցրած մեծ ամանների (ընդբնեբի ուղում է ասել) մէջ. երբ սոքա լաւ չեռացած են՝ այն ժամանակ դերդաստանի բոլոր անդամները՝ առանց հաստակի ու սեռի խտրութեան *) հաւնւում են և իրանց չորերը թաւ տալիս թորուան վերայ, այնպէս որ թմրած կենդանիք մէջն ընկնում ճթպճթալով այրում են, ածուխ դառնում և միւս օր շօթի հետ ուտւում **): (Brief in der „Allg. Zeit„ 1877, № 242).

---

*) Այն էլ արեւելքումը, ուր այրը հինգ երեսն անգամ չի կարող տեսնել, Այդպիսի անխտրութիւնը աւելի շուտ Եւրոպայում կարելի է տեսնել: Ծ. Թ.

**) Անամօթ չափազանցութիւն, որովհետև՝ նախ որ լաւաշը Թորուան կողքին է լինում կպած, ուստի կենդանին նորա վերայ չի կարող ընկնել, այլ նեղքև կրակի վերայ. երկրորդ՝ Թորուան մէջ հաց եղած ժամանակ երբէք շոր չեն թաւ տալ՝ հուր՝ թէ միայն բարեպաշտական նկատից նայելով, որովհետև հացը Արեւելքում հնութեան առարկայ է. և վերջապէս՝ ի դուր տեղ Արեւմտցիք Արեւելցոց քաջայրածակ անմաքուր են համարում, պէտք է զանազանել կամաւոր և ակամայ անմաքրութիւնները, որոնցից երանք Արեւմտցիքն էլ զերծ չեն. ես յիշում եմ միայն արեւմտեան զետերում թափուող ապականութիւնը և այդ ջրերի դործածութիւնը.

Ծ Թ.

ռաջ [1]), և ապա 1807-ին, երբ ռուսական բանակը պարսկական պատերազմի առթիւ մի ամբակոծութիւն փորձեց բերդի վերայ: Բայց հետևեալ երեք պաշարման ընկճուել է. 1828-ին Համարեա չորս օրից յետոյ, 1855-ին վեցամսեայ կանոնաւոր պաշարումից յետոյ և մեծերուամ յարձակմամբ և ամբակոծութեամբ միատեղ, որոնց միանամանութիւնը արդէն յառաջաբանումը հարևանցի յիշուած են: Երբ ռուսները սպասուածոյ Պասկևիչ-Երևանսկու առաջնորդութեամբ երևեցան Կարսի առաջ, նա գրեթէ նոյն դրութեան մէջն էր, ինչ որ հարիւր տարի առաջ Նադիր Շահի ժամանակ: Արտաքին մարտակոցների նշոյլն անգամ չկար, և այսպէս ուրեմն հեշտ էր յարձակուողների համար՝ Կարս գետի ձախակողմեան բարձր ափի վերայ՝ անմիջապէս բերդի դէմուդէմը (այսօրուայ Վէյլե-Փաշայ-Թաբիա մարտակոցի և Թէմուր-Փաշայ արուարձանի մէջ տեղ) հաստատուիլ և հարաւային կողմի իսկապէս գլխաւոր յարձակմանը զօրաւոր կերպով նպաստել: Պաշարողները նախ և առաջ հաստատուեցան հարաւից բերդին կպչող Օրթա-կափու արուարձանում և ապա խրամատ բացին հին պարսպի վերայ և բուն ամրոցում բոյն դրին: Միջնաբերդում սահմանափակուելով՝ հրամանատարը իսկոյն և եթ յանձն առաւ Ռուսաց պահանջած անձնատուրութիւնը, որ և տեղի ունեցաւ Յունիսի 23-ին, ուրեմն Ախուրեանը անցնելուց միայն ութն օր յետոյ, այն րոպէին, երբ Քէօսէ Մէհմէտ փաշայի թափիչ գունդը եւ եւս հասաւ Կարսի դաշտումը: Ամբողջ բերդապահ գունդը՝ մօտ 10,000 հոգի՝ 150 հատ մեծ հրազէններով միատեղ յաղթողի ձեռքն ընկան [2]):

1855-ին դէպքերն արդէն էապէս ուրիշ կերպ ստացան, նոքա մինչև անգամ փոքր ինչ նմանութիւն ունին այս վերջին պատերազմի դէպքերի հետ: Այն ժամանակ նախ քան Կարս պաշարելը մղուեցաւ Քուրուքդարայի արիւնալի ճակատամարտը, որ համարեա միևնոյն դաշտումը տեղի ունեցաւ ինչպէս վերջին կռիւները Կարսի և Ախուրեանի մէջ տեղը: Գեներալ Բէհբութեանը փոքր ինչ առաջ մի ստուար զօրաբաժին էր ուղարկել Բայազդի վերայ, որպէս

---

[1]) Hammer-Purgstall, «Gesch. d. o. Reiches» VIII. 56.

[2]) O. R. Chesney, Die russisch-türkischen Feldzüge 1828—1829, 147.

ղէ այս տեղը իւր ձեռք բերէր, ինչպէս և իսկոյն յաջողեցաւ, յետոյ առաջնորդեց նորան՝ իբրև թէ Զարիֆի փաշայի քամակից՝ դէպի Ալաջայի բարձրութիւն, որպէս ղէ արդելք լինի Թուրքերի Կարս վերադառնալուն։ Թուրք հրամանատարը վաղօրօք առաւ այս խորամանկութեան հոտը, և վճռեց անյապաղ ընկնել Բէհբութեանի սառկաւաճառն բանակի վերայ, բայց Զարիֆիի երեխայական կասկածանքի շնորհիւ բանը ուշացաւ, և երբ երեք օրից յետոյ յարձակուեցաւ Ռուսների վերայ՝ նրանց գտաւ արդէն կատարեալ պատրաստ և լաւ դիրքերի վերայ տեղաւորուած։ Կարսի առջևի տաճկական բանակը, որոյ առաջնորդներն, ինչպէս երևում է, նոյն վարանման մէջն էին, ինչպէս նորերում Մուխթար փաշայի օրով, 1854 Օգոստոս 6-ին յաղթուեց, ամբողջապէս քայքայուեց և իսկոյն Կարս յետ քշուեց։ Սակայն ինն ամիս յետոյ (՞), 1855 Յունիս ամսին միայն սկսեցին Ռուսները կանոնաւոր կերպով պաշարել երբ բերդապահ գունդը՝ Անգլիացի զեներալ Վելիամի հրամանատարութեան ներքոյ՝ ամբողջ կէս տարի դիմացաւ՝ մինչ վերջապէս, ինչպէս ասում են, քաղցածութիւնից ստիպուած՝ բերդի դուռը բաց արաւ զեներալ Մուրավիեվի առջև։ Պաշարողների թիւը՝ այստեղ 30,000-ի էր հասնում [1])։

Եթէ Կարսից դէպի Ալէքսանդրապօլ [2]) գնանք, պէտք կը լինի մեզ Ալաջայ լեռան սևակաճեայ աստիճանները անց կենալ և մտնել հարաւային արևելեան կողմի ծառազուկ, գալուփոս և դէպլի արեւելք հետզհետէ բարձրացող դաշտը։ Հաջի-Վէլի գիւղին մօտիկ, ուր սևակաճեայ սիւների մէջ տեղ բարձրանում են մի հին դղեակի աւերակները, երկիրը Ախուրեանի ուղղութեամբ առանում է աւելի

---

[1]) A. Sandwith, «A Narrative of the siege of Kars».

2) Ալէքսանդրապօլը կանգնում է բարձր սարահարթի լայն քամակի վերայ, այդ տեղը կարծես թէ ստեղծուած էր սահմանագլխի մի մեծ ղէնտրանի համար։ Բայց դորա գլուխ բերելն էլ մեծ գումար նուաեց Ռուսերին։ Սակայն ամրացածը բուն քաղաքը չէ, այլ նորա մերձակայ սահմանագլուխը, որ դէպի հեռախայլն արևմտեան կողմ պաշտպանուած է լաւմանթիւ հաստահեղն մարտկոցներով, բացի պատնէշաւոր բանակատեղիներից և մեծ շտեմարաններից։ Կեդրոնական ամրոցը, որի կողքին շուտով մի փոքրիկ քաղաք բարձրացաւ, որ նախկին Գիւմրու հետ միացաւ, Նիկողայոս կայսրից 'ի պատիւ իւր ամուսնոյն կոչուեցաւ Ալէքսանդրապօլ (ոչ թէ Ալէքսանդրօպօլ, ինչպէս յաճախ գրած են ածում)։ Ախուրեանը բերդի մօտ հասում է կանաչաւէտ մարգագետինների և արօտավայրերի միջով, միայն հալաը մեղրաչափ դէպի արևելքը սկսում են ափերը բարձրանալ, որի վերայ էլ հիմնած են այդ ամրոցները։

պղեցիկ և կենդանի բնութիւն։ Այս կողմից եկողը այստեղն առաջին անգամն է նշմարում Արարատի ձիւնապատ հսկայ կատարը, որ ըստ երևոյթին հազարաւոր ոտնաչափ բարձրութեամբ բոլորովին առանձին է կանգնած բոլոր միւս կատարներից, որոնք ամէն կողմից դուրս են ցցւում և ըստ մեծի մասին սեպաձև հրաբուխներ են։ Նրան Ալեքսանդրապօլի շուրջը ձգւում են միայն սառը շղթաներ, գեաները այդտեղ ինչպէս և հանդիպակաց կողմը՝ յայտնի դաշտային բնութիւն ունի։ Արևելքում բարձրանում է հսկայ և սրածայր Արագածը (մօտ 13,000 ոտ), որ արևելքից սահման է դնում Շիրակ գաւառին։

Ախուրեանի ստորին կողմերում ամենանշանաւոր առարկան Անին է։

Մի հնագոյն գրքում [1]) խիստ ոգևորիչ նկարագրութիւն ենք կարդում այս աւերակ քաղաքի մասին։ Հոյակապ սիւներով, բարձրակամար գմբեթներով և արձանաձև սանդուղներով զարդարուած տաճարներ, դեղնագոյն, սևագոյն և կարմրագոյն քարերով հիւսուած ընդարձակ պալատներ՝ իրանց տանեաց վերայ բարձրացող աշտարակներովն ու մզկիթագոյն պահականոցներով կանգնում են բարձր դարափան վերայ և ձգում իրանց պատկերը առջևից անց կացող խշխշուն գետի մէջ։ Հայաստանի մի խաղաղ անկիւնում բոլորովին առանձնացած քարափան վերայ այս բոլորը կարծես պիւթական զօրութեամբ են յառաջ եկել։ Զարմանալին այն է, որ — ընդելով այնքան ծանր հարուածներին, մանաւանդ այն սոսկալի կործանիչ երկրաշարժին, որ այսօր իսկ երևում է Արարատեան նահանգում — նորա ընդհանուր տեսքը իւր ներայ բեկորներումն էլ ներկայացնում է դեռևս հմայուած քաղաքի պատկեր։ . . . Հիւսիսային արևելեան կողմից գալիս արդէն հեռուից լսում ենք Ախուրեանի խշխշոցը, սակայն նորա կոհակները ամենամօտ տեղից էլ չենք տեսնում, որովհետև նորա ընդունարանը թաքչում է կորացած սևակճեայ ափերի և ուղղագիծ դեղնագոյն աւազաբարերի մէջ, որոց վերայ պարկում են հրաբղխային ժայռեր։ Այն, ինչ որ ամենից առաջ է ընկնում ճանապարհորդի աչքին, քաղաքի բարձր պարիսպն է։ Այնտեղ իրանց աւերման մէջն անգամ հոյակապ՝ աշտարակներ են բարձրանում [2]),

---

[1]) J. Morier. «Ayesha of the maid of Kars».

2) Երբ Համիլտոնը (1836) հետազօտում էր աւերակները այդ երկու դարե-

որոնց գլխից Արտաճի արևմտային պառեկների վերայ մի ժամուռակ անշուշտ դեռ լաւ միջակուած վայրեր էին երևում, մինչ մոնդոլական հրոսակները հրով ու սրով ամայացրին երկիրը և կոպիտ Չամար խանը Բագրատունեաց պալատները մուսա ու սոսկալի արեան ուսա-զան դարձրեց նոցա: Այն պալատներից մինը իւր բոլոր գլխաւոր մասունքներով դեռ անվթար կանգնում է քաղաքի ճիշտ արևմտա-կողմ մի բարձր ժայռի վերայ, որ դուրս է ցցուել մի ապառաժուտ բնական խրամից: Անուց աւերակները ընկնում են իսկապէս մի ժայ-ռոտ թերակղզու վերայ հիւսիսից դէպի հարաւ տարածուելով, ո-րին արևելքից պատում է Ախուրեան գետը, իսկ արևմուտքից մի ցամաք ժայռ եղէն հովիտ: Բնութիւնը միայն հիւսիսից չէր պաշտ-պանել այդ քաղաքը (ինչպէս Կոստանդնուպօլիսը արևմուտքից), ուս-տի այն կողմն էլ քաշել էին հսկայ կրկնապարիսպ և դուրս ընկած բոլորշի աշտարակներով ամրացրել, որպէս զի որ և է ցամաքային արշաւանքից պաշտպանուել կարողանային:

Անուց աւերակները ինչպէս որ այսօր են ներկայանում այցե-լուի աչքին, այնպէս էլ սորանից արդէն հինգ դար առաջ էին: Նո-քա նմանում են աւելի ամայացած քան թէ խապառ կործանուած քաղաքի. և մինչ նորա շուրջը ամայի դաշտի վերայ բնակիչները ողորմելի այրերի մէջ են բնակում, միւս կողմից երբեմի Հայոց հոյա-կապ շէնքերը դեռ այսօր էլ զարմանալ են տալիս մի ազգի վերայ, որ ոչ միայն մարդկային ամենահին և հոյակապ աւանդութիւննե-րով է զարդարուած, այլ և գարերով պատուար էր կանգնել ասիա-կան բռնատիրութեան դէմ: Դեռ այսօր էլ Անուց մէջ օրինաւոր փողոցներով կարող ես մանգալ, այստեղ մի պալատի հոյակապ երեսի պատահել, որ հիւսուած է սևագոյն, կարմրագոյն և դեղնագոյն քառակուսիներից, այնտեղ մի կամարակապ ճեղքուած ճակատի, որոյ խոնարհած գմբեթի միջով արևի ճառագայթները նետս են

ըլոյ սրև մոհանը կործանուած քարերըցը այնպէս էր փակուել, որ անկարելի էր անցնել: Արհեստեան զանգից մոնեղով՝ միևնոյն ժամանակ անց ես կինում կրկնապարսպի միջով, որոնցից ներքինի վերայ պահանջուած կային բաւմամբիւ հայերէն յիշատա-կարաններ: Ասում են որ մի ֆրանսիացի (Boré) եօթն օր այս տեղ կինալով թէպէտ գործ սրսատրել և ուղարկել է Academie des Inscriptions-ին. բայց կորել են նոքա: Սակայն այս երկրորդական խնդրեան վերայ պեռնականները շատ կարմից կասած յայտնեցին:

ընկնում: Բայց և անեղծ հնացած դրվագներ էս կան այնտեղ, որոնք մինչև այսօր ապաստանարան էին լինում քուրդ հովուին ու նորա հօտին՝ երբ հայկական ամառնային արևը անտանելի էր անում լեռնատափերը [1]): *Մինչև անգամ դրան ձմեռապարհն երևում է դեռ արևելեան պարսպում, սակայն մինչև այսօր դեռ քիչ հետախոյզներ են նեռս մտել այնտեղից, որպէս զի Թերևս Հայոց արձանագրական բազմախօսութիւնից, որ, ինչպէս Ասորոց մէջ, տեղում է պաբիսպների անհամար յիշատակարանների վերայ, դուրս բերէին պատմական զանազան գաղտնիքներ, որոնք դեռ թանձր քօղով ծածկուած են . . .* : *Անին վերջինն էր Հայոց այն մայրաքաղաքներից, որոնք բոլորն էլ ստորին Ախուրեանի և նորա մերձակայ գետի մէջ ամփանափակուած փոքրիկ տարածութեան վերայ բարձրանում էին:* Աշտ [2]) *Ա. Բագրատունի թագաւորի օրով նորա տեղ մի տեսակ լիճ ամոց էր, ուր պահւում էին արքունի գանձերը* [3]) *և պատսպարում Արաբացոց դէմ, որոնք, ինչպէս յայտնի է, ութերորդ դարու վերջերում մինչև Հայաստանի խորքերն էին հասել: Նոյնպէս մի Աշտ (Աշոտ) էր, երրորդը ըստ անուան, որ իւր գահը հաստատապէս այստեղ փոխադրեց և տուեց քաղաքին այն ընդարձակութիւնը, որ դեռ այսօր էլ նկատւում է իւր աւերակների մէջ: Մայրաքաղաք մրնաց նա մինչև տասնևմէկերորդ դարու կէսերը՝ երբ Գագիկ Բ. վերջին Բագրատունի թագաւորը կենքը Կոստանդին Մոնոմախոս բիւզանդական կայսրին յանձնեց, որով Անին, ինչպէս և Ախուրեան գետի ամրացած սահմանը, պատնէշ դարձաւ արևելքից արշաւող*

---

1) Ամենից աքանչելին մեծ եկեղեցին է, որ միւս եկեղեցիներից որոշելու համար անշուշտ պէտք էր հայրապետական եկեղեցի կամ մեծ կաթողիկէ անուանել: Նա կանգնում է դրան ճանապարհի հարաւակողմը, լատինական խաչի ձև ունի և դեռ փոքր ժամանակ առաջ բոլորովին անեղծ էր: Տանիքը սրածայր է, ծածկուած մեծ մեծ սալերով, նակ ներքևից յեցած է համաչափների վերայ, որոնք դեռ բոլորովին անվնաս պահպանւում են: Ներքին քառն մեծ շէնքերի մէջ յիշատակութեան արժանի են նաև երկու վառարկղ ութանկիւնի աշտարակները, որոնցից մէկի կողքին ասէլսցրել են մի Ջամի, որ նմանապէս կոթծանուած է: Ցիշեալ եկեղեցու ներքին մասը բաղկանում է մի դլխաւոր միջավայրից և երկու թև ունից: Հարաւարևելեան թևը հին սարակինեական բնութիւն ունի խառն բիւզանդական ձևերով: Կլոր կամարները բարձրանում են երկար ու նուրբ սիւների վերայ: (Ritter, a. a. O. X.)

2) Ոչ թէ Աշոտ, այլ Աշոտ Ողորմած. Թարգմ:

3) St. Martin, «Mém. s. l'Arm.»:

Թուրքերի դէմ։ Հետևաբար այդ փոքրիկ սահմանագիտը այդպէն ինը դարուց էլ առաջ այնպիսի մի գեր էր խաղացել, ինչ որ այս վերջին օրերումս, բայց Բիւզանդացիք աւերիչ քնութիւն չունէին, ուստի, ինչպէս Անին ոչնչ չկորցրեց իւր գերազնութիւնից, նոյնպէս և նորա շրջակայ երկիրը կատարելապէս իւր ծաղկեալ դրութեան մէջ մնաց, մինչև Սելջուկ Ալփ-Արսլանի հեծելազօրը սմբակակոխ արին Բագրատունեան տաճարների սրահները և կամոլիկէ եկեղեցու սեղանները մնուր շինեցին իրանց ձիանների։ Այս աղէտը Բիւզանդացւոց տիրապետութիւնից հազիւ քսան տարի յետոյ տեղի ունեցաւ։ Սակայն Սելջուքների ձեռքից էլ առնուելու էր մի անգամ հայկական այս շահաստանը, և իսկապէս վաթսուն տարի յետոյ (1124) Վրաց Դաւիթ թագաւորի ձեռքով, որ յափշտակեց նորան և այսպիսով եթէ ոչ հայկական, դէթ քրիստոնեայ իշխանութեան տուրացրեց։ Արուլզէվարին իշխանութիւնից ձգեց և իրա հետ քաշ տուեց դէպի Վրաստան։ Այս բանի վերայ Պահլաւունի (?), գերի գըտնայոլ որդին, իւր հրոսակներին Խորասանից դէպի Ախուրեանը փութացրեց և երկաւեայ պաշարումից յետոյ Անի մտաւ — առանց քաղաքին մի որ և է վնաս հասցնելու։ Սելջուքեանց պատմութիւնը այսպիսի վեհանձնութեան և ներողամտութեան շատ օրինակներ է տալիս. և այս առաջին թուրք հարստութեան և իւր յաջորդների մէջ եղած ահագին տարբերութիւնը ղգալու համար բաւական է միայն մի Մելիք-շահի անուն յիշել։ Բայց գորան շուտով հետևեց Մոնղոլների սոսկալի արշաւանաց փոթորիկը, որ Անուց բնակիչների երկու երրորդը սրակոտոր արաւ [1]), և չորեքտասաներորդ դարու

---

1) Սակայն այս աշխարհակալների իշխանները ու զօրավարները էլ երբեմն երեսին խնայել են քաղաքները և բնակիչները, ինչպէս օրինակի համար կրնայ հետաքրքրական համարել Հուլաղու-Խանին անգամ, որ Բաղդատը խլելուց յետոյ հրամայեց սրչափ կարելի է ազատել քաղաքը հրդեհից։ Աւերի լուսագոյն օրինակները տուել են Հռուլաղուի յաջորդները կամ «Իլխանէ»-ները, մանաւանդ Ազղունի սպէղ Գազանը, որ այնպիսի օրէնքներ ու քաղաքակրթական կարգեր է հաստատել, ինչպէս նորանից յետոյ խալիֆայութեան ժամանակ հարստութիւնները և ոչ մինը արաւ։ Կարծ ու տղեզ Մոնգոլ իշխանը, որ Գազան էր կոչւում, ունէր նաև, պատմութիւնից սատզուած, մի թուլութիւն, այն է վիտամին դէպի քրիստոնէութիւն։ Եթէ Հարուն, Մամունն, Ալմոտասիմ և Վաթիկ վերջին ազատասիրա խալիֆաները, որոնցից ամենը մինչև անգամ կրօնական սատուածատարվել լինելը մերժում էին, խորամանկ պատմութեան մէջ անօրինակ կրօնական նեղսրտամտութեամբ ուղղափառ մուսուլմանութեան շինքը վանդալաւոր կերպով

սկզբում էլ մի սարսափելի երկրաշարժ հիմնայատակ դարձոյց քաղաքը: Այն օրից ՚ի վեր այլ ևս ոչ մի ձեռք չէ մխուել հայկական այս հոյակապ քաղաքին, և ճանապարհորդը, ինչպէս մի վերերկրեայ Ռոմպէյի մէջ, կարող է այսօր ևս մեն գալ ամայացած փողոցներում, աքանչանալ պալատների սրահների վերայ և զմայլել ձեղունների հրաշարուեստ նկարով, որ դեռ մինչև հիմա էլ զարմանալի կերպով փայլում է Բագրատունեան մայրաքաղաքի պատերի վերայ. . . . : Բոլոր այս յարկերի միջով վզվզում է այսօր Արարատի գագաթից փչած հողմը: Միայն մի քանի մարդիկ բոյն են դրել այս աւերակների մէջ և իրանց նախնական քարայրերը — նախնի փառահեղութեան կեդրոնում — գտնւում են աւերակների արևելեան կողմի ժայռի ծերպերում: Իսկ սառերկրեայ դամբարանները (որոնց մուտքը դեռ միշտ զարդարւում են կոթողներով և ճարտարապետական զարդերով) [1]) ահագին ապաստարաններ են քուրդ աւազակների համար:

Հաղիւ վեց մղոն տարածութեան մէջ՝ Անիից մինչև այնտեղ, ուր Արփաչայը Երասխին է խառնւում, ոչ հեռի այսօրուայ Հաջի-Բայրամի գիւղից (որոյ տափարակ քարէ տանիքները ընկուզենեաց և նշենեաց այգիների միջում նկատելի են) [2]), պէտք է մեղ գոնէ երեք հայկական քաղաքակրթութեան ուրիշ կեդրոնների մասին ևս տեղեկութիւն տալ: Նախ և առաջ պէտք է յիշել Բագարանը, ուր գտնւում էր Հերմանոս Հայերի բոլոր աստուածոց ընդհանուր մեհեանը: Նորա տեղը մինչև այսօր դեռ հաստատ չէ որոշուել, բայց կարծում են, որ Արփաչայի վերայ եղած լինի, և իսկապէս այնտեղ, ուր Ախուր գետը խառնւում է սորա հետ, ուրեմն ոչ հեռի այն կրճից, ուր այսօր գտնւում է Քօչիրան (?) վանքը [3]): Այն ժայռի վե-

---

դղեակին, Իլխաններէն օրմէն էլ վառնդը մինչև այնտեղն էր հասել, որ քիչ էր մնացել որ Մոնղոլները ազգովին բրկոտնեայ ղառնային: Միայն քաղաքական մտատածմունքներն էին, որ Ղազանին յետ պահեցին այս քայլն անելուց, Մեքքայի ազատուելուց և խալիֆութիւնը այլ ևս երկիրս չունենք Թէ Քալայի տեղ կը բարձրանայ կաթողիկէ: (Համեմատիր Մալիօլի «Պատմութիւն Պարսից», I:

[1]) Hamilton, վերև յիշուած տեղ.

[2]) Ker Porter, Trav. II, 641.

[3]) Ker Porter, Trav. I, 117, նաև St. Martin, «Mémoire sur l' Arménie», I, 297.

բայից, ուր Արփաչայը գոռալով մանում է հանդարտ ու ջրածաւթափայլ Երասխի մէջ, մոխիկ է անում հոյակապ կիրճերի վերայ մի վաղուց թողնուած ու մոռացուած պատուար: Դա Երուանդ Բ. Թագաւորի ամրոցն [1]) ու աթոռանիստն է (երկրորդը, որ կառուցել է այս Հայ Տրդատիանոս), մի ժամանակ հռչակուած Երուանդակերտը՝ իւր շքեղ պալատներովն ու դամբարաններով՝ հեռու չէր գնում նորանից: Արշաւանքներն ու երկրաշարժները ապագայ սերունդին շատ քիչ յիշատակներ են թողել այստեղ, և միայն սև տապանաքարերը մնացել են երբեմն այն հոյակապ շէնքերի տեղ: Նոյնպէս առանձին և ամայի քարափան վերայ գնում է Երուանդաշատը՝ վերև նկարագրուած տեղին ճիշտ դէմդիմաց, գետի ձախ ափումը: Ստորին Արփաչայի մայրաքաղաքների թուում սա չորրորդն է: Երուանդ աշխարհակալ Արշակունի արքայազունը, որ Անտիոքուսի իշխանութիւնը կործանել էր Հայաստանումն ու նրա տեղ այդ իրան իբրև երկրորդ աթոռանիստ, որովհետև հին Արմաւրում (էջմիածնի հարաւակողմը Երասխի վերայ) այլևս անդորը չէր գտնում իրան: Հայաստանի այս շինասէր իշխանի պատմութիւնը հիւսուած է այս երկրի ամենահետաքրքրական դարերից մէկի պատմութեան հետ: Սանատրուկը, որին Երուանդը ոչ միայն կործանեց, այլև ջարդեց նորա բոլոր պալատականներին, ունէր Արտաշէս անունով մի որդի, որ ազատուել էր այն կոտորածից և ապաստանել Պարթևների մօտ: Երուանդ Բ-ի երկարատև թագաւորութեան միջոցին նա իւր հասակն առաւ, ձեռք բերեց Պարթև թագաւորների օժանդակութիւնը և գահը յափշտակողին վեր ձգեց իւր իսկ մայրաքաղաքի պարսպների առջև [2]):

Հարուստակերով մեր ուղին Երասխաձորի միջով դէպի նեղքև հանդիպում ենք Կարա-Քալէ (Սև Բերդ) անունով հայկական հնա-

---

1) Տե՛ս քարտէսը, Voy. p. 36.

2) Ապագայում Արտաշէսը զանց չառաւ արքայավայել կերպով վարձատրելու իւր Պարթև բարեկամներին, մանաւանդ Սմբատ Բագրատունուն, որին սպարապետ կարգեց: Նորա օրով վերստին կանգնեց Արշակունեաց մայրաքաղաք Արտաշատը, որ Ներսէսի լեռնցիները Կօբքուլոսի հրամանատարութեան ներքև կործանել էին: Երուանդ Բ-ի լոլոր աթոռանիստ քաղաքների գանձերը, մանաւանդ այն բազմաթիւ կուռքերը, տեղահանուեցան նոր մայրաքաղաք, որ բազմներով ու անտառներով զարդարուած նոր վայր ստացաւ: (Մովսէս Խորենացի):

շէն ամրոցին, որ համարեա բոլորովին առանձնացած է հրաբղխային մի սև ժայռի վերայ, ունենալով իւր ստորոտում կարկաչուն գետը, իսկ հանդէպը՝ աջ ափան վերայ՝ մի ուրիշ, ըստ երևոյթին գեռ ևս ամուր, բերդ, այն է Սուրմանլի։ Առաջնի ամրոցի երկու կողմերը պաշտպանուում են բնական խրամներով, որ բացուել են հրաբղխային ժայռերում, իսկ երրորդը՝ նրանցի յորձանքով։ ուրեմն միայն հիւսիսային կողմից բաց, ուր վաղ ժամանակներում բարձրանում էին մի քանի կարգ պատուարներ [1]։ Նորագոյն շէնքերը շինուած են ըստ մեծի մասին սև լաւանների բեկորներից և բերդի առաջև կայ մի գերեզմանատուն, ուր գտնուում են զանազան ազգերի գերեզմաններ, որոնց մէջ տեսնուում են պարսկերէն և թուրքերէն արձանագրութիւններով և խոյակերպ քանդակներով մահարձաններ, որոնք առաջ միայն հայկական գերեզմանատան նշաններ էին համարուում։ Այն հրաբղխային ժայռի առջևով, որի վերայ գտնուում է բերդն ու իւր շրջակայքը, անց է կենում Երասխը, որոյ հարաւային ափում կայ այնու ամենայնիւ մի փոքր հարթավայր, ուր պետեղ ւում էր երբեմն ստորին քաղաքն իւր այգեստանով, որ ներկայումս բոլորովին ամայացած է։ Ասում են որ մի հին կամուրջի միացորդներ էլ են նկատուում այստեղ (ինչպէս Անուոյ մօտ) [2]։ . . .

Արաս-Քալէի և Իգդիրի մօտերքից սկսում է կամաց կամաց ընդարձակուիլ Արաքսի այն լայնարձակ դաշտը, որի միջով մեր պտոյտի հէնց սկզբումը արդէն անցկացանք։ Նա միայն մի քանի ոտ բարձր է գետի մակերևութից, ամենևին քարուտ չէ, այլ հիւսուած բազմաթիւ առուներով։ Իգդիրից մի քանի մղոն դէպի հարաւ-արեւելք՝ Մասիսի հիւսիսային ստորոտում, մի առանձնացած հովտում

---

[1]) Dubois. Voy. III, 446.

2) Այն խառնափնթոր լեռնագոտու մի խոր անկիւնում՝ Արաքսից դէպի հարաւ ընկնում է Կոլք գետը, որ մինչև Հայաստանի խորերը, ամբողջ Անդր-Կովկասում հաշուուած է իւր վաղեմի աղահանքով։ Գինը շինուած է մի լերկ ուղղաձիգ ժայռի վերայ կիսաշրջանի ձևով, որի մէջտեղումը տափաւորակ տանիքով մի փոքրիկ եկեղեցի կայ։ Միւս տները այնպէս խիտ խառնուել են իրար վերայ, որ բնակիչները վատ եղանակին, երբ նեղ փողոցները անանցանելի են դառնում փափկած կրաքարէն աղի շաղախից, գիւղի մէկ ծայից միւս ծայրը տանիքներովն են անցուդարձ անում, (Dubois. վերոյիշեալ տեղում)։ Նաև Radde, «Vier-Vorträge ü. d. Kaukasus», 47.

գտնուում է մի գիւղ՝ դա Արկուռին է։ Մի փոքրիկ վտակ ողողում է լավայի ահագին ձանգուածներ, հովիտն ի վար շրջապատում են նորան խիտ անտառներ, իսկ դէպի վեր՝ պարզատ մարգագետիններ, — սիրելի բնակավայր մի քուրդ-պարսիկ-հայ խառնացեղի, որ այստեղ Ռուսական տզրկեցուԹեան ներքոյ կամաց կամաց կմիանայ կենցաղավարուԹեան անցաւ։ Արկուռի գիւղը՝ քաղ հայկական աւանդուԹեան՝ այն տեղն է, ուր նոյ նահապետը իւր հրաշալի վերուԹիւնից յետոյ շնորհակալուԹեան Սեղան կանգնեցրեց [1]։ Քամակից Մեծ ու Փոքր Մասիսների սառուցապատ հսկայ կատարները, առջևից հեռու հիւսիսում Երևանի գեղեցիկ լեռնագօտին և նոյա մէջ Նրասխի շողշողուն ընդարձակ պաշտը, — այսպիսի դիրքը գոնէ բաւական նպաստաւոր է վերոյիշեալ աւանդուԹեանը։

Ադրէն Արփայ-Զայի մօտ Բագարանում մենք ոտք էինք դրել նախնեաց այն ընտիր հողի վերայ, ուր տեղի են ունեցել Հայաստանի առաստղաշունչ հին և ամենահին պատմական անցքերը։ Ուրեմն ժամանակն է որ Հայոց ազգի իրա մասին խօսենք և նորա տոհմագրական պարզացումն կարճօրէն յառաջ բերենք։ Հայերի, ինչպէս ասիական միւս քաղաքակիրթ ազգերից շատերի սկզբնական ծագումը ծածկուում է աղօտ դիւցազնական զրոյցների մէջ։ Բայց մինչ Ասորւոց, Իրանացւոց և Տուրանացւոց անդրպատմական ժամանակը անհուն և առասպելաշատ ժամանակամիջոցներում է տատանուում, որոնց մէջ մենք ոչինչ շօշափելի և ստհմանաւոր բան չենք կարող տեսնել [2], Հայերի ծագումն սկիզբն է առնում պատ-

1) Այս տեղանի տեղ այսօր կանգնում է լավայի քարերից շինուած մի փոքրիկ եկեղեցի, որ դոնէ 1000 տարուայ շէնք լինելու է, ինչպէս որ նորա շուրջ սերունդաւոր վերեզմանաքարերը ամէն կողմից ապացուցանում են։ Ներս մի սեան վերայ կարդացուում է մի արձանագրուԹիւն Դաւիթ Ա.-նոյ (989-ին Հայաստանի Թագաւոր), Աշոտ Գէր որդին, որ այդ գիւղին զանազան արտօնուԹիւններ շնորհէց, որոնցից ի հնարէ այժմ ոչինչ չի մնացել։ Այնուամենայնիւ Արկուռու քեհակիչը դեռ այսօր էլ պարծենում է առաջին ՀոշտուԹեան զրկի սեղանը իւր Հայրենիքումն ունենալու համար (Տես Parrot. «Reise ..» I, 219; Dubois Voy. III.

2) Իրանացւոց անդրպատմական ժամանակագրուԹիւնը մեր առջևն է դնում մեհենի ժամանակամիջոցների մի այսպիսի սխեմա։ Իւրաքանչիւրը հաստատուն տող կառավարում էր երկուքն 1000 տարի մինչեակ և ապա 1000 տարի էլ մի ուրիշ հաստատուն տողի հետ, որ մնացած վէրջերն տեղ էր բռնում։ Հազար տարուց վերն նա սրան հրաժարեցնում էր և մի երկրորդի հետ կառավարում և ապա

մեր Հայկ առաջին պարոնը՝ Հայկ, Հայոց առաջին նիւանների նահապետը, հին աւանդութիւններին նայելով՝ Յաբեթի թոռներից մինը լինելու է [1]: Այս Հայկի անունով Հայերը իրանց երկիրը կոչեցին Հայաստան, և նորա որդուց՝ «Հայգազեան» (Հայկազուն), — Հայկի սերունդ. — միևնոյն ժամանակ, մինչև անգամ աշխարհաբար Հայերէնում, լոկ «Հայ» *) բառը նոյն նշանակութիւն ունի ինչ որ Հայաստան բառը: (Օրինակ Բարձր Հայկ (Հայք) = Բարձր-Հայաստան, Արևելեան-Հայաստանի և Երզնկայի մէջ տեղ գտնուած երկիրը) Հայկ Բաբելոնի դաշտն իջնելուց և այնտեղ (?) Բելին յաղթելուց յետոյ իբր երեքհարիւր հոգի հնկոյ անձերից բաղկացած դերդաստանի հետ հայրենիք վերադարձաւ և բնակութիւն հաստատեց Արարատի այս կողմ, Դարօն **) (Տարօն) գաւառում, որի տեղը շատ վէս ու դէն հետազօտելուց յետոյ գտնուել է այսաւուր Մուրատի աւազանի սահմաններում՝ Խամրի և Աշոյ մէջ տեղը: Իսկապէս դեռ այսօր էլ գտնում է այնտեղ Հայկ (Հոյ+կամ) անունով մի վայր: Պատմութիւն էր, որ ևւր յաղթական վերադարձին Կորդուաց երկրով առաջին անգամ ուղղ դրեց այս աւուր Մուրատի միջին աւազանի վերայ և այսպիսով առաջին անգամ տեղեկութիւն բերեց Հայոց բուն հայրենիքի մասին, բայց ոչ երբէք այսպիսի առնուն տալով, ինչպէս որ Հերոդոտն էլ նորանից առաջ, որ միայն Եփրատի աւազանի սահմաններում բնակուող ժողովրդեան և նորա՝ Բաղդադի հետ ունեցած առևտրական յարաբերութիւնների մասին է

մի երթոցք հետ և այսպէս հետզհետէ երկնքի բոլոր հաստատուն աստղերի հետ: Բոլոր հաստատուն աստղերին այս եղանակով երան վերջակից ունենալուց յետոյ՝ իշխանութիւնը յանձնում էր նորան, որն ամենից առաջ վերջակից էր եղել երան, և այսպէս հրկնում էին դարերը 1000-ական տարի մինչև վերջին հաստատուն աստղը. — անըմբռնելի և անսահման ժամանակների բուռն երևակայութիւն: (Համեմատիր J. Kruger, «Geschichte der Assyrier und Iranier», 65).

1) Սակայն Աստուածաշունչի տոհմական ցուցակների մէջ Հայկ անունը չէ տեսնում: Մովսէս Ա. գրքին (10, 2 — 4) նայելով՝ Յաբեթի թոռները (իբր Գոմեր և Յաւան երկու որդիներից սերած) հիշատակում են Ասքանազ, Ռիփաթ, Թորգամ, Եղիսա, Թարշիշ, Հիւսիմ և Դոդանիմ:

*) Հայ ընթերցողը ընդհանուր տեսնում է, թէ հեղինակը ինչ մոլորութեան մէջ է ընկել երբ Հայ և Հայ+ բառերը միևնոյն է համարել: Թարգ.

**) Պ. հեղինակը Հայոց յատուկ անունների տատապարձութեան մէջ աւելի հասարակ ծուռ ընթացքի է հետևում: Թարգ.

խօսում՝ Զարմանալի բան. այս խիստ հետաքրքրելի և կլասիքական երկիրը հազարաւոր տարիներով մեզ համար խապառ կորած էր և միայն այս դարու ճանապարհորդներից մինն [1]) էր՝ որ գտաւ Մուբաթի աւազանը իւր բոլոր սահմանով։ Այն օրից՝ ի վեր մեր հըմտութիւնը նորա տեղագրութեան մասին շատ չի աւելացել, բայց հետևեալ կէս դարումը, ուրեմն մինչև մեր օրերը, հայիական նախնի դարու զանազան տեղերը համեմատելով այսօրուայ տեղերի հետ՝ նոյնութիւնը ապացուցուեց և այսպիսով խոր քննութիւններ անելու համար յենակէտ արուեցաւ։

Հայկի թոռ Արմենակն էր որ՝ առաջին անգամ թափառականի ցուպը ձեռքն առաւ և իւր դերդաստանի հետ հիւսիսայինարևելեան լեռներից իջաւ մի դաշտ, որ ամէն կողմից շրջապատուած էր բարձր լեռնագօտիներով, իսկ հարաւից ողջունում էր նորան (Արմենակին) մի ապիատակափառ նախահայր՝ կանգնած երիտասարդների մէջ [2])։ Թէ այստեղ խօսքը Մասիսի վերայ է Արաքսի դաշտի վերաբերութեամբ, բոլորովին անկասկածելի է, բայց անուն չունէին այն ժամանակ ոչ մինը և ոչ միւսը։ Ինքն Արմենակը հաստատեց բնակութիւն հիւսիսակողմեան մի լեռան ստորոտում, որ իւր *դու (?) անունով Արագած կոչեց, ինչպէս որ մինչև այսօր էլ կոչւում է Երևանի և Ալեքսանդրապօլի մէջ տեղ ընկնող հանգած ահագին հրաբուխը։ Արմենակի, Հայոց այս երկրորդ նախահօր միւս որդիներն էլ զանազան քաղաքներ, գետեր և դաշտաւաներ իրանց անունով կոչեցին, որոնք մինչև այսօր էլ դեռ պահում են այդ կոչումները։ Երկրորդ որդին, Արմաւիր (?), իւր քաղաքը [3]) հիմնեց այն «մեծ գետի»

---

1) J. Morier, «Journey through Persia, Armenia etc.», (1808 — 1809.)

2) Մովսէս Խորենացի

3) Այս մայրաքաղաքը, որ մեկուկէս հազարամ ծաղկեցաւ և հեթանոսական ամենահին բազմնիներն իւր ծոցումն ունէր, արդէն Աբշակ Բ-ի ժամանակ (363 — 381 Ք. յ.) խապառ աւերակ էր դարձել։ Քրիստոնէութիւնը Հայաստան մտնելուց յետոյ պէտք էր որ նա իւր բոլոր նախկին յարգը կորցրած լինէր, և այսպէս հասկանալի է լինում, թէ ինչի նոր ժամանակների հեղինակները մինչև անգամ նորա տեղը այլ եւս չէին կարող որոշ ցոյց տալ։ Այս աշխարհահռչակ քաղաքը կանգնած էր մի վեհանձրգի ստորոտի վերայ, որից այսօր միայն պատռտի մի քանի բեկորներն են տեսնւում։ (Համեմատիր Dubois, Voy. III).

վերայ, որ անց է կենում Հարաւային և Հիւսիսային լեռների միջև դաշտովը։ Այս գետը Արմաւիրի (Արամայիսի) Երասխ, Երասխէս (Արաքսէս) որդու անունով կոչուեցաւ, ինչպէս մինչև այսօր էլ կոչւում է Հայերից [1]) . . . . Այս կարճ օրինակներից հետևում է, որ Հայք այն ազգաց խմբին էին պատկանում, որ ազգաց պատմութեան սկզբից՝ ի վեր բնակում էին այն երկրում, որ մենք աշխարհագրութեան մէջ ընդհանրապէս Արևմտեան-Ասիա ենք անուանում, ուրեմն այն նեղ բաղադրուածքը որ գտնում է մէկ կողմից Սև ծովի և Կնդկական ովկիանոսի, իսկ միւս կողմից Կովկասի և Խորասանի Տաւրոսեան անցքերի մէջ։ Այս ազգերը՝ Ասորիք, Քաղդէացիք, Մեդացիք, Պարսիկներ, Հայեր, և Կորդուացիք (Քուրդերը), յետոյ նաև Պարթևներ և Սասանները լեզուով և կրօնքով սերտ ազգակցութիւն ունէին իրար հետ և ըստ ազգաբանութեան վերաբերում են Իրան-Արեայց խմբին, որով Հայերի իրանական ծագումը յայտնի ապացուցուած է երևում, թէպետև երբէք լրջօրէն չի կասկածուել այս մասին։ Կասկածելին միայն այն կարող էր համարուիլ, որ իբր թէ Հայաստանը գտնուելով վերոյիշեալ երկիրների սահմանագծի վերայ՝ կարող էր միաս կրել դրացիների հետից, մանաւանդ Սկիւթացիներից, որ բնակւում էին Կովկասի հիւսիսակողմը, և այսպիսով իւր բնակիչների գուտ արիւնը կարող էր խառնուիլ մի ենթազրութիւն, որի անհիմն լինելը երևում է այն հանգամանքից, որ Հայոց նախնի պատմութիւնը իսկապէս նոյնանշան է Ասորոց պատմութեան։ Վերոյիշեալ ազգերից շատերը խաղացել են կարճ կամ երկար դերեր, առաջ մանակեայ կերպով ձ'նշել իւրեանց դրացիներին և նոցա միասով փառաւոր երկրակալութիւն արել (ինչպէս Ասորիք և Պարսիկները), իսկ Հայերը երբէք, մինչև անգամ իւրեանց վերջին, ինքնակալ թագաւորների օրով մեծ կախումն ունէին Նոր-Պարսիկներից։ Նմանա-

---

1) Արտաւազդ անուան համար էլ, որ առաջ Մասիս էր կոչւում, եթէ ոչ պատմական, գէթ աստղական յիշատակ ունինք։ Արայ, այսինքն, «Գեղեցկիկը (?)», այն հսկայ լեռան տատրատումը ասանուել էր տատրուհի Շամիրամից։ Այն երկիրը այնուհետև սկսեց կոչուել միայն Արայիւ-յարաս, «անկումն Արայի» (?!), ուրեմն խոսպ այն աւելի անցքին քան թէ տեղին վերաբերում։ Այս անունը որ վերաբերում էր միայն այն դաշտին (այսօրուայ Իգդերի մօտ), ուր յետոյ պատերազմը տեղի էր ունեցել, անշուշտ շատ յետոյ անցաւ այն երկու հսկայ լեռներին։ (Ինջիջեան, Hermann, „Das russische Amenien“. Ritter, Erdkunde, X. U.)

պես և Քուրդերը (Կորդուացիք) չկարողացան երբեք միասին և հզօր պետութիւն կազմել, յատկութիւն, որ դեռ այսօր էլ բաւական զգալի կերպով նկատուում է լեռնաբնակ Քրդերի ցեղական հակադատկորդութեան մէջ . . . :

Ա. օրական երկրորդ երկրակալութեան ժամանակ (1244-ից մինչև 725 Քրիստոսից առաջ) Հայերը քաղաքականապես արդէն բոլորովին ձուլուել էին նորա հետ [1]) : Սակայն ասորական տարրի խիտ կական հոսանքը դէպի Հայաստան միայն շատ ուշ տեղի ունեցաւ, իսկապես Սենեքերիմի ժամանակ, երբ նախնի տիեզերակալութիւնը բաժանուեցաւ ասորական-իրանական պետութեան: Եւ իրօք՝ երբ Սենեքերիմը Երուսաղէմ գնալ տեղ պաշարելուց յետոյ Նինուէ մնաւ՝ իր երկու որդիներից Նիսրօխ կուռքի տաճարում սպանուեցաւ, որից յետոյ սոքա՝ Ադրամելէք և Սարասար՝ փախան դէպի «Արարատեան երկիրը» [2]) : Թէ նոցա անմիջական ժառանգներն էլ հետները գաղթեցին՝ անկասկածելի է երևում հետևեալ դէպքերի ընթացքից, որովհետև անհնար էր երկու իշխաններին միանգամ այնքան շուտ և ապահով կերպով հաստատուիլ այն երկրներում (Տալ ծն), որ տուին նոցա Հայոց թագաւորները, եթէ այնտեղ պատրաստ ասորական տարրեր չէին եղել. Այդ երկու արքայազուններին նախապատրաստել Սանասարեանց և Արծրունեաց ասորական-հայկական դերպատասանողներին, որոնք յաճախ ընդունում էին իրանց վերայ մինչև անգամ «Սենեքերիմ» անունը: Հետզհետէ բարձր դիրք ստացան մանաւանդ Արծրունիք, Հայոց թագաւորների պալատում «Արծրուկրտները», որոնք ապագայում հաստատեցին և վանայ (Վասպուրականի) թագաւորութիւնը, և որոնցից յառաջ եկաւ մինչև անգամ բիւզանդական մի կայսր (Լևոն Ե.) : Պատմութեան մէջ սա, ի հարկէ, միշտ լոկ հայկական տերունդ է համարուում, նակայն ոչ

---

1) Մենք պէտք չէ զարմանանք, որ, օրինակի համար, Աբգարեանք — Աբգար ձևով — երևում է Հայ Թագաւորաց մի ցանկում, որովհետև Դիոդորը պարզ կերպով ասում է, թէ նա՝ Նինուէի կործանուելուց յետոյ՝ տերից ամբողջ Ասիային (Ասորին-Ասիային է կամենում ասել) : Մանաւանդ որ Հայոց նախնի Թագաւորաց պատմութիւնը, ինչպէս որ վկայում է Մովսէս Խորենացին, քաղաւած է ասորական տարեգրութիւնից, և հետևաբար շատ լուրերով միևնոյն է ասորականի հետ (Տես J. Krüger, 193.)

2) Թագաւորաց Բ. գիրք, 13, 37.

միայն Լևոնի, այլև Վասիլ Ա-ի և իւր թոռ Կոնստանտին Պորփիւրոժենի երակներում ասորական արիւն էր վազում [1]: Այդ վաղեմի ասորական գաղթականների թոռները յետոյ սուելի ու սուելի պատուի ու զօրութեան հասան և տէր էին իսկապէս այն հողաշխարհին, որ գտնւում է վերին Տիգրիսի վերայ՝ սկսած Ամիդ (Դիարբեքիր) քաղաքից մինչև Վանայ արևելեան կողմերը, մի գօտի, որ ըստ աշխարհագրութեան և քաղաքականութեան ձգւում էր Ասորեստանի և Հայաստանի մէջ տեղը:

Սաբուհոդոնոսորի օրով տեղի ունեցաւ Հայաստանում մի այլ նշանաւոր օտար տարրի հոսանք: Այն սարսափելի հարուածը, որ Ինիլաթանի սպարապետ Հողեփերնէսն ստացաւ Պաղեստինայում, և սպարապետի չարաչար մահուան (Յուդիթի ձեռքով) պատճառած ասորական զօրաց ցրուիլը, ինչպէս երևում է, արգելք չեն եղել յաջորդ թագաւորներին՝ Եբրայեցի գերիներին Հայաստանի լեռների վերայ բնակեցնելու: Այս գաղթականութիւններն էլ ըստ երևոյթին բաւական արագ մեծացան, սակայն դեռ երկար ժամանակ նոքա չունեցան մի առանձին գերազանցութիւն, ինչպէս որ ունեցին Արծրունիք, մինչ վերջապէս եկաւ Շամբատ անունով մէկը, որ և նոխազ հայր եղաւ մի նշանաւոր ցեղի, այն է Բագրատունեաց, մի ցեղ, որից յառաջ եկաւ այն հին քրիստոնեայ հռչակաւոր հարստութիւնը, և որի վերջնին ընձիւղները դեռ այսօր էլ երևում են Ռուսաստանում: Շատ զարմանալի է այն երևոյթը, որ հէնց մի «Եբրայեցի աղնուականի» էր վիճակուած հաստատել մի հարստութիւն, որ Արևելքում հազար տարի պաշտպան պէտք էր հանդիսանար քրիս-

---

[1]) Neumann, „Versuch einer armenischen Literatur“. Արևելեան բուդդայական ակտութիւնը կործանուելուց յետոյ երբ հէնց բիւզանդացիները սահմանները վերստին էին հաստատում Թրակիայում (970)՝ ոչ այնքան յուշնահան տարբեր էր, որ անել տուած այն թուէրը, այլ Հայկականը (ասորական-հայկական): Արևելեան Բուդդայական յաղթող Յովհաննէս Զմշկիկի կայսրը Հայ էր, նոյնպէս Հայեր էին և վաստակաւոր զօրավարներն ու զօրաց բուն մասը: Զմշկիկը, ինչպէս Լեւքսին Կոստանտին Ե., նոր դաւած Փիլիպպոպոլիսը ամրացնելու նպատակով բազմաթիւ Հայեր բնակեցրեց նորա շրջակայքում: C. J. Jirecek, «Die Heerstrasse von Belgrad nach Constantinopel», 79.

տոնէութեան [1]) ։ Բագրատունիք իրանց խիստ բազմաթիւ (քրիստոնեայ) ազգականների հետ շուտով հայկական իշխանութեան գլուխն անցան, և սկսած իւրեանց սկզբնական բնագաւառ Տարօնից երկրորդերին իրանց իշխանական գայիսոնը մինչև Բասէն (Վերին Արաքսի-գաւառ), կարս և յետոյ մինչև Վրաստան, և Աշոտ Բ-ի օրով Արաբ խալիֆաներից էլ ճանաչուեցան իբրև օրինաւոր հարստութիւն։ Բագրատունեաց Հայաստանի քաղաքական գործերի մէջ մտնելը, մուտք, որ յայտնապէս միայն հետզհետէ և մտաւոր զերազանցութեամբ և ոչ երբէք բռնի տեղի ունեցաւ, ամենալաւ ապացոյցն է թէ բուն Հայերի մէջ ի՞նչքան պակաս է եղել իշխանութեան և տիրապետութեան ձգտումն, և թէ ի՞նչպէս նոքա այդ բանները յետոյ հէնց օտար հարստութիւններին թողլին. ճիշտ այնպէս, ինչպէս որ սկզբում էլ ոչ մի փորձ չարին պաշտպանութեղու ասորական գերիշխանութեան դէմ, ինչպէս որ արել էին Մեդացիքը, ասորական երկրորդ տիեզերակալութեան այս խորտակիչները . . .

Բագրատունիքը իշխեցին Հայաստանում, ինչպէս արդէն վերևը յիշուեցաւ, մինչև Փրկչի 1030 թուականը, երբ Բիւզանդացիք Գագիկ Բ-ի ժամանակ վերջ դրին Կարսայ թագաւորութեանը [2]) ։ Սակայն ազգակցութեամբ կապուած լինելով Վրաստանին՝ հազիւ մի կարճ միջոց անց կացաւ՝ երբ Բագրատունիքը յընթացս յաջորդ դարերին իբրև փառահեղ թագաւորներ և տիրապետողներ վերստին հանդէս դուրս եկան, մինչ վերջապէս 1802-ին, երբ Վրաստան, Կախէթ և Իմերէթը Ռուսաց ձեռքն անցան, այն մօտ հազար երկու հարիւր տարուայ հարստութիւնը վայր դրեց իւր թագը [3]),

---

1) Բագրատունիք պարծենում են այն ծագումով, որից և Քրիստոս է սերուել, և իրանց արմատը հասցնում են մինչև Դաւիթը, նոքա ամենայնի աւելի երաւունք ունին քան Ֆրանսիոյ Մահագոմերքը. (K. Koch, «Kaukasische Länder», 74).

2) Neumann, «Vahrams Chronicle of the Armenian Kingdom» 1, c. p. XI, Ritter a. a. O.

3) Վերջին Բագրատունեաց մասին եղած կարծիքները տարբեր են։ Մի քանիսը խիստ գովում են նոցա (տես O. Srencer, Journey trough Tsherkessia etc.»), մինչդեռ ուրիշները (ինչպէս K. Koch, «Die kaukasischen Länder.» 8) բարկ են համարում, որ Ռուսաստանը Անդրակովկասեան

Շատ հաւանական է որ Բագրատունիք, երբ գերութեան և պատուհասի հասան, յիշելով իրանց բուն ծագումը՝ մինչև անգամ իբրև քրիստոնեայ իշխաններ՝ Խոսրէվլացւոց միշտ համակրումն էին և, որչափ կարելի էր, օգնում նոցա գաղթելուն Հայաստանի հողի վերայ [1]։ Գոնէ յայտնի է որ Բագրատունեաց (?) նախորդներից մինը, երբեմն ծագած Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնողը և Պոմպէոսի ժամանակակից Տիգրանը յաղթելով Պաղեստինային, եթէ ոչ ուրիշ միջոցով, գէթ բռնի քնակեցրեց իւր պետական երկիրը, ինչպէս որ վարուել էր նաև Կապադովկացիների հետ [2]։

Հայաստան գաղթող ասորական և եբրայական տարրերից ոչ պակաս հետաքրքրաշարժ է մի ուրիշ տարրի գաղթականութիւնը, որ տոհմաբանութեան մէջ յայտնի է Մամիկոնեան անունով։ Հայ տարեգիրների ասածին նայելով՝ Սասանեան երկրորդ թագաւոր Շապուհ Ա-ի իշխանութեան ժամանակ, ուրեմն Փրկչի 240 — 271 թուականների միջոցներին, պատահեցաւ, որ Ձենաստանի (Չին կամ Խինա) իշխաններից մինը իւր բոլոր մերձաւորների հետ փախչելով իւր Արբակ-Բակուր հօրեղբօր հարուածներից՝ գաղթական եկաւ Հայաստան, ինչպէս որ փոքր առաջ Օրբէլեանքն եկել էին Վրաստան [3]։ Թէ նոքա ոչ իսկապէս Չինացի, այլ անպատճառ այստեղ

մանը եշխաններն հիմը փորեց և այսպիսով այն վաղեմի Թշնամութիւնները վերջ դրաւ։ Այս խոսպէս վերաբերում է Մենդրելիայի վերջին Թագաւորներին, «Դաղեանները», որոնք մերձաւոր ազգականներ էին Շարվաշիձեներն աբխազական ցեղին։ Սակայն նոքա անցեալ դարուն սկսեցին կառավարութեան գլուխն անցնել, մինչ նախնի Դաղեանները Թուրքերից հալածուելով ապաւինեցան Ռուսաստան և կոչուեցան Դադեանով (K. Koch, a. a. O., 74 և այլն)։

1) Զորըրդ դարու կիսում, այսինքն Հայաստանի քրիստոնէութեան մեծ հալածման ժամանակ, Սրուանդաշատ քաղաքը իւր կործանման օրերում մօտ 30,000 հրեական տուն ունէր իւր մէջ։ Նոյնպէս էլ Վանում կային 10,000 տուն, Նախճևանում՝ 16,000, Արտաշատում՝ 9,000 . . . Այն ժամանակ 70,000 գերդաստանի չափ ականջից ասկողեցան քնակել Նախճևանի շուրջը, (տես Փառաւոր Բիւզանդացու ժամանակագրութիւնը St. Martin, «Histoire des révolut. de l'Arm. etc.»)

2) Ստրաբոն XII. Նաև Մովսէս Խորենացին։

3) Օրբէլեան — իրանց Օրբէլ եշխանի անունով այսպէս կոչուած — շատ ուշադիրները յետոյ Հայաստանում էլ քնակութիւն հաստատեցին, ուր նոքա ամուսնութեամբ ազգական դարձան Բագրատունեաց։ Իսկ առհասարակ նոքա Վրաստանի

Թուրքիստանի բնակիչները լինելու էին՝ արդէն այն ժամանակ, երբ Մամիկոնեաններին լաւ յատկութիւններ է տալիս և յիշում նոցա ջերմ յարաբերութիւնը Իրանի և Արաբիոյ բնակիչների հետ, յարաբերութիւն, որ սոցա և բուն Չինացւոց մէջ երբէք տեղի չէ ունեցել: Ուրիշ շատ տեղի մօտաւոր իրողութիւններ էլ վկայում են, որ նոքա երբէք չէին կարող բուն Չինացիք կամ առհասարակ Մօնղոլական ցեղ լինել, որոնք շատ ուշ և բոլորովին ուրիշ հանգամանքներում Արեւմուտքի հետ յարաբերութիւն սկսեցին: Մանաւանդ որ մի ուրիշ Հայ (?) ժամանակագիր — Վախթանգ (Vakstâng) (?!) — նոյնպէս միշտ Տուրանացւոց վերայ է խօսում երբ մի բան է պատմում Մամիկոնեանների մասին . . . : Արդեօք նոքա էլ տոհմով Տուրանացի էին, այսինքն այն միւս մեծ ազգախմբից, որոնց Իրանացիներից զանազանելու համար այնպէս էին կոչում, և որոնց այսօր Ուրալ-Ալթայեան ազգեր են անուանում: Մենք փաստեր ունինք այս մասին բոլորովին կասկածելու: Հին ժամանակագիրների նկարագրութիւններից բաւական համոզիչ կերպով երևում է, որ Մամիկոնեանքը Պարսից և Հայոց ազգական՝ ուրեմն արիական ազգ էին, մենք չենք կարող այս բանի վերայ կասկածիլ մանաւանդ այն պատճառով, որովհետև Թուրքիստանի ժողովուրդների մէջ դեռ այսօր էլ ամեն տեղ սփռուած գտնըւում են արիական տարրեր [1] . . . : Թէ Մամիկոնեանները ինչքան

համար այն էին, ինչ որ Մամիկոնեանք Հայաստանի համար: (Տես St. Martin: Mémoire sur l' Arménie, II, 57 և այլն):

1) Տաճիկ կոչուածներն են ազգ (տես H. Vámbéry, «Die Iranier Turkestans», Oesterr. Monatsschr. f. d. Orient, II, 7): 1857-ին Շլագինտվէյտ եղբայրք հնդկական Ասիայից վերադառնալուց անմիջապէս յետոյ յայտնել էին երանց համոզմունքը թէ Արեւելեան Թուրքիստանի բնակիչները Թաթարացած Արիք են: Ուրեմն, անկասկած, ոչ միայն այսօր պարսկերէն խօսող Տաճիկները, այլև Արեւելեան-Թուրքիստանի արդեան Թուրքերէն-խօսող ցեղերն էլ արիական ծագումն ունենալու են: Ս. յայտնի ասած՝ նախնի բնակիչները արիական և ոչ թուրքական (տուրանական) եղած լինելու են: Այս կարծիքը նոյնպէս Ռօքերտ Շաւէի արած նկատողութիւններով մեծ հաւանականութեան հասաւ: Տաճիկների մեծ մասը վաճառականութեամբ են պարապում (ուրեմն ինչպէս Մամիկոնեանց օրով). նոքա երանց ծագումը առնում են Անդիջանից, կամ գաղթել են Բադաշանից, Աֆղանիստանից և միւս մերձաւոր երկիրներից: F. v. Hellwald, «Central-

անձևյան իրանց նոր հայրենիքում; ճիշտ չի դիտցուիր, բայց և այնպէս երևում էր որ Քրիստոսի երրորդ դարուց կէսերքին այնու ամենայնիւ բաւական բազմաթիւ պէտք է եղած լինին, որովհետև երբ Հայոց թագաւոր Տրդատ II (?) այն միջոցին Հռոմէացւոց օգնութեամբ իւր հօր գահը Սասանեաններից դարձեալ յետ առաւ, Մամիկոնեանների կոչումն անց կացաւ, որոյ փոխարէնը իրա և իրայ մերձկանց բնակութեան համար ժառանգական ձիրքեւ տուաւ այն Տարօնը, ուր, ինչպէս որ յայտնի է, բնակել կէին Հայկայ թոռները և ամբա Սարանարի և Շամբատայ սերունդները (Արծրունեաց և Բագրատունեաց նախնիք [1]): Մամիկոնեանները իբրեւանց հաւատարմութեամբ, քաջութեամբ և ուրիշ առաքինութիւններով հետզհետէ առաջ անցան, որով և զօրաւոր նեցուկ դառան Հայկական պետութեան, որին միշտ սպառնում էր վտանգը: Նոցա վերջին յիշատակութիւնը լինում է իններորդ դարում, իսկապէս բիւզանդական ժամանակագրութեանց մէջ: Նկատելու արժանի է, որ Հայոց արշեան նշանաւոր աշխարհագիր Ինճիճեանը Մանէքցի (?) քուրդ ցեղը Մամիկոնեանց մնացորդին է համարում, որով այս արիական ցեղը մի այլ արիական ցեղի կը դառնար [2]. . . . .

Հայաստանի հին դաղթականութեանց մէջ Բուլգարներն էլ մի

Asien», 190.) — Այս վիճոյն քանը ապացուցանում է և. Քրատզեր (Geschichte der Assyrier und Iranier» 188 և այլն): Նորա խօսքին նայելով Նեբքին մեծ պատերազմի ժամանակ Տուրանում եղող ցեղը անտարակոյս արիական սերունդից էր: «Տուրան» անունը այս քանում ոչինչ նշանակութիւն չունի, որովհետև Ֆերդուզի պատմական շահնամէին նայելով՝ Իրանի սահմանի մեծ կռիվ երբ եղել նախ Ֆերիդունի որդի Տուր-ից ընդունեց այդ անունը: Վերջերը Տուրանցւոց և Իրանցւոց մէջ անպակաս էին սոսկալի վրէժխնդրութեան կռիւները, որոնց սկզբնապատճառ եղաւ Քրիստոսից 13 դար առաջ Մինոչէրը (Խալա, Նինոս՝) երրորդ ասորի տիեզերակալը: Նա այն վիճոյն Ճանապարհն արաւ, ինչ որ հազար տարի յետոյ արաւ Ալէքսանդր մեծը, երբ կամենում էր Դարեհին իւր վերջին ապստամբանից դուրս քերել: Բաւիլ պատասխանելի առաջ տեղի ունեցաւ այն վճռական մեծ ճակատամարտը, որով Իրանցւոց բաժին ընկաւ տիեզերակալութիւն, իսկ Տուրանը դարաւ ասրական պետութեան մի լոկ գաւառ: Տուրն ընկել էր ճակատամարտումը, իսկ նորա որդի Դուշինը՝ երբ սորդրեալ՝ հաւատարմութեան երդում արաւ Մինոչհերին:

1) Տես Մովսէս Խորենացի:

2) Ինճիճեան «Հնութիւնք Հայաստանի»:

դեր խաղացած լինելու են ; Թէպէտ այդ ենթադրութիւնը ուժից բաւական ընկած է, բայց այնու ամենայնիւ գիտնական Կարլ Ռիտտերը ընդունում է այն [1]), երբ նա Վունտ (Վենետ) անուան ներքև, որով իբր թէ այդ Բուլգար Համալուսածների առաջնորդը կոչուելիս է եղել, գտնում է նմանութիւն Վենդերի (Wenden) անուան հետ, որից և հետևեցնում է Հայաստանում տեղի ունեցած «սլավոնական» մի գաղթականութիւն։ Արդի հետազօտութեան կէտից մտիկ անելով, ի հարկէ, այսպիսի մի եզրակացութիւն շատ տարօրինակ կ'երևայ, որովհետև հետազօտութիւնը Բուլգարներին՝ հէնց պատմութեան մէջ ոտ կոխելու պէս՝ ոչ թէ Սլաւներ այլ Ֆինական-ուգրիական ցեղ է ճանաչում։ Եւ որովհետև, ինչպէս յայտնի է, քանի անգամ անց են կացել Կովկասը, և ստորին Ասիոյ իշխանութեանց զանազան դարագլուխ կազմելու առիթ տուել վասն որոյ շատ հաւանական է որ այսպիսի ցեղեր լինէին Հայաստան գաղթողները. սակայն այսպիսի հանգամանքներում՝ հասկանալի բան է՝ որ նոքա Հայոց տոհմական ածման վերայ ոչինչ ազգեցութիւն չէին կարող ունենալ [2]) . . . . Սելջուքների, Մոնղոլների, Օսմաննեների և Թաթարների օրով տեղի ունեցած օտարների շարժումը չափազանց թէ էական փոփոխութիւն բերած լինի Հայերի վերայ, թէպէտև նոցա՝ օտարը իրան նմանացը-

---

[1]) Ritter, «Frdkunde», X, 589,

2) Շատ աւելի ուշադրութեան արժանի է Վօլգա-Բուլգարների Բաղդագի խալիֆաների հետ ունեցած յարաբերութիւնը, որ, ի հարկէ, շատ յետոյ է տեղի ունեցում։ (Բուլգարները առաջին դաղթականութիւնը դէպի Հայաստան համաձայն է Աբշամ Ա-ի ժամանակ, ուրեմն Քրիստոսից առաջ վերջընթերը դարում)։ Դա երկարամեայ և մտաւոր-կրօնական յարաբերութիւն էր, բայց ոչ խուռն բազմութեամբ թէ այն յարաբերութիւնը լինում էր Հայաստանի վերայով, դա ցոյց է տալիս աշխարհագրութիւնը։ Ալմոս Թաղաւորի որդիներից մինը Բաղդագի վերայով մինչև ետդամ ուխան գնաց Մեքքա, և Վօլգայի Բուլգարայ տէրութեան ամբողջ քաղաքակրթութիւնը արևելեան լինութիւն ստացաւ, ինչպէս և դուրս եկաւ մի պատմական, որ արաբերէն լեզուով Բուլգարացւոց պատմութիւն գրեց, որ գրքաքաղը գնաց կորաւ (R. Rösler, «Romänische Studien», 245 և այլն.) ԵԹԷ ընդունենք էլ սկիւթական ցեղերի մի ժամանակաւոր Հոսանք դէպի Հայաստան՝ այնու ամենայնիւ դեռ անորոշ խնդիր կը մնայ, թէ արդեօք նոքա բուն Բուլգարներ էին, թէ չէ խազարական Տուլաս և Լուդաբ, կամ Բուրդաս, որոնց Իբն Դաստա (Rösler, նոյն գրքում, եր. 359) յառաջ է բերում երբեմն Կովկասու հիւսիսակողմ բնակող ազգեր, որոնք յարաբերութիւն ունեցան Հայերի հետ։

նելու և իւր անհատականութիւնը օտարերկրեայ ազդեցութեան դէմ սակաւ պաշտպանելու յատկութիւնը՝ Օսմանցւոց նկատմամբ առանց հետևանքի մնացած չի լինիլ։ Բայց այս բանը, ի հարկէ, ոչինչ փոփոխութիւն չի անիլ այն իրողութեան վերայ, որ Հայերը Արեաց ցեղին են պատկանում և իրանց տոհմային զարգացման սկզբներում միշտ միայն ազգակից ցեղերի հետ արեան խառնումն ունեցան։ Հայոց՝ արիական արմատից ունեցած ծագմանը վկայում է նաև նոցա լեզուն [1]։

Նախ՝ հին Հայոց բոլոր զրոյցները միևնոյն շրջանումն են դառնում, ուր պարսկական Շահնամէի հերոսներն են գտնւում, որով իրականապէս ապացուցուած է երևում Հայոց Իրանացւոց հետ ունեցած մոտաւոր ազգականութիւնը [2]։ Հին Հայերէն կամ Հայկեան բարբառի քերականական կազմուածքը նոյն է, ինչ որ յատուկ է արիական (Հնդկա-գերմանական) լեզուներին։ («Հայկեան» բարբառ ասացինք, որոշելու համար աշխարհաբար Հայերէնից, որով խօսում է այսօր Հայաստանի բնակիչը, և որ թուրքերէն և նոյն պարսկերէն անթիւ բառերով խառնուած է և բաժանւում է երկու գլխաւոր բարբառների՝ արևմտեան և արևելեան [3]։ Մանաւանդ միավանկ ար-

---

1) Հայոց լեզուի վերայ կայ մի թէպէտ փոքրիկ բայց հմտաւոր և թանգագին գրականութիւն։ Սորա մէջ ամենանշանաւոր երկասիրութիւններն են Petermann, «Gramatica linguae armeniacae». Պատկանեան, «Recherches s. l. format. d. l. langue arménienne». Böttticher, «Vergleichung der armenischen Consonanten mit denen des Sanskrit», յետոյ Լագարդէ, Ֆ. Մյուլերի, Ֆ. Վինդիշմանի, Շրէօդերի և այլոց շարադրութիւնները։ Հայոց լեզուն բազմանում է (P. de Lagarde, «Armenische Studien», 208) երեք տարբերից, որք են Հայկեան, Աղշամունեան (Պահլաւի) և Սասանեան։ Այս վերջին երկուսը հասկանալի է որ իրանական են, բայց Հայկեանն էլ պատկանում է լեզուաց այն խմբին, որի հնագոյն ներկայացուցիչը Զենդարէնն է։ Զանազան նկատմամբ բոլորովին իրանական է՝ նաև բառերու մասին՝ շաղկապուած է յունական և սլաւոնական բարբառների հետ։ Եւ թէ քերականութեան նկատմամբ ինչ աստիճանի հապակցութիւն ունի, դա ապագայ հետազօտութեանն է մնում որոշել։

2) Neumann, «Versuch einer arm. Literatur».

3) Այս երկու բարբառներից այն, որ Հայաստանի արևելեան մասում, այն է Եւանի նահանգում խօսւում է, շատ աւելի մաքուրն է, նաև միւսը (արևմտեանը) լեցուն է օտար բառերով, մանաւանդ Թուրքերէնով։ Այլ ամենից մաքուրը լինելու է

մանները ցոյց են տալիս, որ սեռական ազգակցութիւնը երբէք չի պաշտպանել Հայերէնը, ընդհակառակ որ Հայերը երկար ժամանակ յարաբերութիւն են ունեցել Ասորիների հետ և եբրայական գաղթականութիւն է եկել Հայաստան։ Բացի սորանից, որովհետև Հայկեան լեզուն մի կերպ մեռած լեզու համարելու է, և որովհետև դասական մատենագրութիւն վերջանալուց յետոյ (Ժ դարու կէսերին) մեր քուր Հայերէնը միայն վանքերումն էր մնացել, ուստի որոյ լեզուաբանները ամենալաւ հանգամանք ունեցան՝ հիմնուելով գիտնական Մխիթարեանների հրատարակութեանց և տեղեկութեանց վերայ՝ վճռողապէս ապացուցանել Հայերէնի արիական ծագումը. ընդհակառակ մի քանի հակառակորդներին, որոնք, զարմանալի բան, նորա մի քանի թարթարական տարրերից սխալուում էին թրքա-թարթարական ազգակցութիւն հետևցնել, թէպէտ այդ տարրերը միայն նոր-Հայերէնի մէջն էին երևում։ Յայտնի է, որ նոր-պարսկերէնն էլ այսօր բազմաթիւ թուրքերէն և արաբերէն բառեր ունի իւր մէջ, բայց այնու ամենայնիւ ոչոքի մտքից չէր կարող անց կենալ պարսկերէնը ուրիշ շրջանում դասել քան թէ արիական լեզուների շրջանում, որին, ինչպէս ամենքին յայտնի է, պատկանում է նա։ Բացի սորանից՝ Հայերէնումը կան բոլոր այն բառերը, որոնց տեղ այսօր գործ են ածում թուրքերէն բառերը, և այս ապացոյց է, որ այս վերջիններէի գործածութիւնը նշանակութիւն չունի։ Նաև կարծողներ եղան, որ վանում Հայերէն լեզուով բևեռագրեր են գտնուել։ Այս իրողութեան վերայ կասկածելու տեղիք չկայ, սակայն պէտք է մոռանալ, որ Մեսրոպն եղաւ (Ե. դարում) սեպհական Հայերէն ատառերի հնարողը, իսկ մինչև այն ժամանակ գործ էին ածում հարևանների, իրօք Ասորոց, Պարսից և մինչև անգամ Յունաց նշանագրերը . . . ։

Բրատաեան նահանգից դեռ չհեռացած պէտք է յիշել մի վայր էլ որ մեզ Հայաստանի հին դարից յանկարծ փոխադրում է քրիստոնէական — միջին և նորագոյն դար։ Դա կաթողիկոսանիստ էջմիածինն է։ Երևանի վերին թաղից ուղղակի դէպի արևմուտք մոտ

այն հին Հայկեան բարբառը, որ այսօր խօսում են Աստրախանի դաղթական Հայերը (?!)։ Իսկ ասորին Սբաքոս ասաց վերայ բնակող Հայերի բարբառը բոլորովին խոժդժաղուռը լինելու էր։

անելով՝ մօտ չորս մղոն հեռաւորութեան վերայ՝ բարձրանում են Ա-
րաքսի դաշտում երեք տարաձև եկեղեցիք : Դէպի Սարդարաբադ և
Ալիքսանդրապօլ տարող կարաւանի ուղիղ ճանապարհի վերայ կանգ-
նող այս երեք հսկայ կոթողները՝ ոչ շատ հեռուից՝ նմանում են
աւելի եգիպտական բուրգերի, քան թէ քրիստոնէական տաճարների,
ինչ որ են իրօք : Բայց տեղը հասած՝ պատկերը, ի հարկէ փոխւում
է, երբ նկատելի են լինում այս տաճարներից մէկի քառակուսի բարձր
շրջապարիսպը և ապա յարակից շէնքերը, և վերջապէս տաճարի
ճարտարապետական ձևերն ու հոյակապ բարձր գմբէթը . . . . :
Հայրապետական մայր աթոռ Էջմիածինն է այս : Հայաստանի կրօնա-
քաղաքական կեդրոնը : Արդէն նորա հիմնարկութեան օրերում այն-
պիսի դէպքեր են պատահում, որոնք անմիջական յարաբերութիւն
ունին Պարթևների և նոցա ոսոխ Սասանեանների ժամանակ տեղի
ունեցած այն մեծ յեղափոխութեանց հետ : Այս վայրը դեռ շատ
մեծ նշանակութիւն ունի, ի հարկէ, ուղղափառ Հայերի համար,
որոնց երևակայութեան մէջ դեռ կենդանի է «Միածնի իջումն», որ
Հայոց առաքեալ Գրիգոր Լուսաւորիչը տեսել էր այսօրուայ տաճարի
տեղում : Պատերազմները Ալևելքում ըստ մեծի մասին կրօնական
կամ ցեղական են լինում, և շատ սակաւ է պատահում որ դրքա-
ղուտ քաղաքական թշնամութիւն լինին, այս սակաւն էլ արևելեան
շատ ազգերի մէջ հետզհետէ կրօնականի է վերանում, որ քաղաքա-
կանից անհամեմատ առաւել տարատևելի է. այս պատճառով էլ Էջ-
միածնի տարեդիրներում ամենից առաջ աչքի են ընկնում զուտ
եկեղեցական աւանդութիւնները :

Երբ Ռուսաստանը Թիւրքմանչայի դաշնագրութեան (1827) զօ-
րութեամբ տէր դարձաւ Երևանի խանութեան և այսպիսով ստեղ-
ծեց իրա համար մի Ռուս-Հայկական նահանգ՝ նա աշխատում էր
Հայրապետական աթոռ Էջմիածնի՝ Մեծն Հայաստանի հոգևոր իշ-
խանութեան այս իսկական կեդրոնի համար էլ թերևս նոյնքան,
որքան այդ չափաւոր երկրի համար : Փաղկեդոնի (այսաւուր Կոս-
տանդնուպօլսոյ արուարձան Քադիքէօյը) ժողովից անմիջապէս յետոյ,
որով Հայոց եկեղեցու մէջ մնաց մեզ արդէն յայտնի վարդապետու-
թիւնը, պապական Հայերը իրանց հայրապետական աթոռը հաստա-
տեցին հեռաւոր Սսում (Թարսիսի մօտ Կիլիկիոյ մէջ) (?!!), մինչդեռ
Լուսաւորչականների հայրապետը, միայն Էջմիածնի վեհմ նը-
շանակութեան պատճառով ձգտում էր իւր աթոռը այստեղ հաստա-

տելու [1]։ Ռուսաստանը այս պատճառով յոյս ունէր օգուտ քաղելու ո՛չ միայն այն վաղեմի և հաստատմամբ աւանդութեան, այլ մանաւանդ այն անեղծ ազդեցութեան շնորհով, որ էջմիածինը միշտ ունէր Տաճկաստանի Հայերի վերայ։ Էջմիածին ինչպէս միշտ նոյնպէս և այսօր կրօնական կեդրոնատեղի է, հաւատոյ ապաստանարան (ինչպէս և Հռոմը պապականների համար), խստակեացների հայրենիք և անհամար ջերմեռանդների ուխտատեղի [2]։ Այլակրօն իշխանների սկզբնական ճնշմանը յաջորդեց փառաց դար։ Կաթողիկոսը նստում էր իւր պարսպապատ վանքում, և՝ արևելեան բոլոր ինքնակալների նման՝ իշխում էր մերթ բռնաւորական խստութեամբ և միշտ աստուածային արդարութիւնն ու աստուածային կամքը տնվրէպ գործադրողի գիտակցութեամբ ու իշխանութեամբ։ Դեռ այս վերջին տասը տարիներում՝ Հայոց քահանայապետին այցելելը միշտ մի կերպ պաշտօնական ունկնդրութեան ձև ունէր. և այս միջոցին նա՝ իւր շողշողուն աթոռի վերայ բազմած՝ շրջապատում էր բազմաթիւ եպիսկոպոսներով ու վարդապետներով։

Էջմիածնի և Ս. Գրիգորի հետ, որ խորին ծերութեան հասած մեռաւ Երզնկայում, ուր և թաղուեցաւ (Սեպուհ լերան այրերից մէկի մէջ), կապուում է Հայաստանի պատմութեան ամենակենդանի դարերից մէկը։ Երբ Պարթևների զօրութիւնը ստորին Ասիայում արդէն նուազել էր և պարսկական գահի վերայ մի նոր հարստութիւն բարձրացել՝ Հայաստանում յանկարծ դուրս եկաւ մի զօր-

---

[1]) Hermann, «Das russische Armenien», 18 և այլն։

2) Բայց պարագաները դեռ մինչև անցեալ դարու կէսը այստեղ այնու ամենայնիւ շատ ուրախալի չէին։ Կաթողիկոսները նախանձոտ էին, անախտ և ընչաւէր, և իրանք ու իրանց եպիսկոպոսները միշտ խառնուում էին զրացի տաճկական և իրանց՝ այն ժամանակ դեռ պարսկական՝ պետութիւնների աշխարհային գործերում։ Իսկ նոցա ազդեցութիւնը ոչինչ օգուտ չէր բերում աղքատութեան ու տգիտութեան մէջ ընկղմած հայ ընակիչներին։ Այն ժամանակուայ սովորութեանց վոլտութեանը վկայում է նաև այն, որ հիւրերի լաւագոյն պատիւը ցլամարտութիւնն էր համարում։ (Համեմատիր Tavernier, Six Voy. etc. և Chardin, Voy. en Perse. Ritter, Erdk. X, 517). *)։

---

*) Որչափ ես յիշում եմ, սորա այս ահնդ սովորութեանը որևէ վատ կամ տգեղ նշանակութիւն չեն տալ։ Թանօթ. Թարգմ.

Ծունեայ Աշշակունի՝ Խոսրով իշխանը՝ որ իսկոյն պատերազմի ելաւ Սասանեան հարատեւթեան հիմնադրի՝ Արտաշէր Բաբեքանի դէմ: Հին հայկական անկախութեան վերջին բորբոքն էր այս: Աշշակունեան տան կործանումը դժբաղդաբար խիստ անփառունակ կերպով տեղի ունեցաւ մի հասարակ մարզպանի ձեռքով, որովհետեւ Աշշակունի իշխաններից մինը՝ Անակը, որ Արտաշիրի մարտիմներիցն էր, Սասանեանների կողմն անցաւ և օգնեց սորա նախնի թագաւորական ցեղը ջնջելու, առանց մտածելու թէ ինքն այսպիսով իւր իսկ տունն է քանդում [1]: Աշշակունիների հայ կուսակիցները այս ընդհանուր կոտորածից կարողացան Խոսրովի միայն երկու որդիքն ազատել՝ Տրդատին ու նորա քոյր Խոսրովիդխտին, որոնց իսկոյն Հռոմ փախցրին: Տրդատը ամբողջ երեսուն տարի Հռոմէացւոց մայրաքաղաքում մնաց, և ապա, ինչպէս վերևում արդէն յիշեցինք, Հռոմէական մի բանակով իւր հայրենիք վերադարձաւ, որպէս զի Սասանեաններին քշէ և իւր նախնեաց գահը վերստին գրաւէ: . . . . .

[1]) St. Martin, «Mém. s. l' Arm.» I.

«ՏԵՍ-ՆՇԱՆ ՓՈՒՄԲԱՆ լսելհամձնեցա վաւերացնել այս կանոնադրութիւնս»
Գլխաւոր Վարչութեան Մնծաւոր
Գևոնեպատ-Վեյսինեան Փոխանորդ

1880 յունուարի 31
Թիֆլիզ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՋԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

I

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 1. «Թիֆլիզի ընկերութիւնը հայերէն գրքերը հրատարակութեան» հիմնուած է Թիֆլիզում և նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանած գրքեր։

Ծանօթ. Ընկերութեան հրատարակութիւնները հնարաւորութեան սահմանում ընդհանուր կանոնադրութեանց։

§ 2. Ընկերութեան կազմողները են՝ խորհուրդ, մշտնջենաւոր, պատուոյ և աշխատակից-անդամք։ Անդամ կարող են լինել երկու սեռից։ Անդամներ թէ՛ սահմանաւորած չէ։

§ 3. Ընկերութեան հասոյթն է՝ ա. տարեկան և միանուագ վճարները. բ. Ընկերութեան տպագրութեանց վաճառումներից գոյացած գումարը և գ. Թատրոնական նեղկայացումներից, հնդկրկանեներից, հրապարակական ասմունքներից և այլ՝ օրէնքով թոյլ տուած ձեռնարկութիւններից հայացած արդիւնքը։

II

ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՑԱ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 4. Խորհուրդ, մշտնջենաւոր և աշխատակից-անդամ ընտրւում է վարչութիւնը, իսկ պատուոյ անդամ ընտրւում է ընդհանուր ժողովը։

§ 5. Պահապ անդամ ընտրվում են այն անձինք, որոնք իւրեանց անձնական արժանաւորութեամբ կամ իւրեանց հասարակական դրութեամբ կարող են առաձնապէս օգուտ տալ Ընկերութեանը։

§ 6. Աշխատակից անդամ ընտրվում են այն անձինք, որոնք իւրեանց աշխատանքով կամ գիտութեամբ կարող են Ընկերութեանը օգտակար լինել։ Աշխատակից անդամները ընտրվում են վարչով։

§ 7. Այն անձինք, որոնք վաճառագ նուիրում են Ընկերութեանը ոչ պակաս քան հարիւր րուբլի, կարող են մշտնջենաւոր անդամ ընտրուիլ։

§ 8. Խոհական անդամը վճարում է տարեկան վճիռ րուբլի։

Յառաջ. Այն խոհական անդամը, որ վճիռ տարուայ ընթացքում չէ վճարել իւր տարեկան վճարը, համարվում է Ընկերութեան անդամակցութենից հրաժարուած։

§ 9. Ընկերութեան ընդհանուր ժողովների միջ նեղիայ գտնուող ամեն կարգի հարցեր անդամները ընտրական ձայն ունեն և ընտրելի են Ընկերութեան ամեն պաշտօնեների համար։

III

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ՆՈՅՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

§ 10. Ընկերութեան գործերը կառավարում են՝ ա. Վարչութիւնը և բ. Խմբապետների մանաւանդովը։

§ 11. Վարչութեան պաշտօնական անձինքն են՝ առնագլա, փոխ-առնագլա, երկու անդամք, առնագրի, գանձապահ և գրագրա։

§ 12. Վարչութիւնը վարում է Ընկերութեան տնտեսական մասը, քննում է նորա գրամական հաշիւները և գումարը, պաշտպանում է, ուր պէտք է, նորա շահերը, պատրաստում է տարեկան ընդհանուր հաշիւը Ընկերութեան աշխատութեանց, կարգադրութեանց, կոչքի և գրութեան մասին, նեղիայցնում է ծախսուց հաշիւը մեռատարագը և հոգում է խմբապետների մանաւանդովի ընդունած գործերի տարագրութեան մասին։ Վարչութեան կազմից են լինում բոլոր յանձնաժողովները որևէքց հատատութեանց և անճանց հետ։

§ 13. Վարչութեան առնագլուխը հսկողութիւն ունի, որ ձշտութեամբ կատարուին այն կանոնագրութիւնը և Ընդհանուր ժողովի, Վարչութեան և խմբապետների մանաւանդովի վճիռները։

§ 14. Առնագլուխ չգայակայութեան ժամանակ նորա պաշտօնը վարում է փոխ-առնագլուխը։

§ 15. Վարչութեան առնագրիը կատարում է Ընդհանուր ժողովի և Վարչութեան նիստերի արձանագրութիւնները։ Նա վարում է դիւանական գործերը և պահում է գրութիւնները։

§ 16. Վարչութեան գանձապահը վարում է Ընկերութեան գրամական գործերը և պահում է հաշիւները։ Նա ընդունում է բոլոր գրամական վճարները և նուէրները, ծախսը է անում Վարչութեան կարգադրութեամբ։

Գանձապահը կազմում է տարեկան մանրամասն հաշիւ գումարների ելևմտից մասին։

§ 17. Ծախսերի համար գանձապահը կարող է իւր մօտ ունենալ մինչև հարիւր րուբլի։ Մնացեալ բոլոր գումարը պահվում է տեղական բանկերից մեկի մէջ յանուն Ընկերութեան ըստ որոշման Վարչութեան։ Դրամական արժեթղթերը պահվում են գանձապահի մօտ։

§ 18. Գրասլահը պահում է Ընկերութեան գրքերը և հրատարակութիւնները։

§ 19. Վարչութեան մէջ պէտք է կետրոնական բոլոր գրագրութիւնները։

§ 20. Խմբագրական մասնաժողովը կայանում է եօթ անդամներից։

§ 21. Խմբագրական մասնաժողովը ընտրում է տպագրուելիք հեղինակութիւնները և նշանակում է հեղինակներին կամ թարգմանիչներին վարձատրութիւն նոցա աշխատութեան համար։ Առանց սորա վճռի ոչ մի գիրք չի կարող հրատարակուել Ընկերութեան կողմից։

§ 22. Խմբագրական մասնաժողովը իւր միջից ընտրում է տեսնապետ և տեսնադպիր։

§ 23. Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի անդամները ընտրվում են երկու տարով, բայց տասնչի տարուայ վերջը իւրաքանչիւրից դուրս են գնում երեքը վիճակով և նոցա տեղը ընտրվում են նորերը. երկրորդ տարին դուրս են գնում միւս երեքը և նախագահները։

§ 24. Բոլոր վերոյիշեալ պաշտօնատար անձանց ընտրութիւնը հաստատվում է Ընկերութեան Ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ։

Ծանոթ. Ընտրուած համարվում են այն անձինք, որոնք կատանան նեւրկայ եղող անդամների ձայների մեծամասնութիւնը։

§ 25. Երիս տարուց յետոյ նոյն պաշտօնատար անձինք վերընտրելի են նոյն պաշտօնների համար։

§ 26. Ընկերութեան Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի յարաբերութեանց ձևը որոշվում է վոխադարձ համաձայնութեամբ։ Իսկ նորանց մէջ պատահած բոլոր տարաձայնութիւնները լուծում է Ընդհանուր ժողովը։

IV

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

§ 27. Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը գումարվում են ըստ պահանջման հարկի և նոցա հրաւիրում են իւրեանց նախագահները։

§ 28. Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը կազմում են իւրեանց նիստերի արձանագրութիւնները, որոնք տասրագրում են բոլոր նեւրկայ եղող անդամները։

Ծանոթ. Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի նիստերը կայացած են համարվում, երբ նեւրկայ են ոչ պակաս հինգ անդամից։

§ 29. Ընդհանուր ժողովները լինում են՝ տարեկան և արտաքոյ կարգի և հրաւիրվում են լրագրեայ մէջ տրված յայտարարութեամբ։

§ 30. Արտաքոյ կարգի ժողովները հրաւիրւում են ըստ պահանջման հարկի կամ ոչ պակաս քանուհինգ անդամից առաջարկութեամբ։

§ 31. Տարեկան Ընդհանուր Ժողովում. ա. Վարչութեան տեղեկագիրը ներկայացուում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան լրացած տարուայ աշխատութեանից, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին. բ. ընտրւում են պաշտօնատար անձինք. գ. հաստատւում է Վարչութեան ծախուց նախահաշիւը և դ. ընտրւում են պատուոյ անդամները։

§ 32. Ընդհանուր Ժողովը ընտրում է իւր համար մի նախագահող։

§ 33. Ընդհանուր Ժողովը կայացած է համարւում, երբ ներկայ եղող անդամների թիւը թիւրկեղում գտնուող անդամների թուի $^1/_3$-ից պակաս չէ։

§ 34. Եթէ հրաւիրուած Ընդհանուր Ժողովը չ'կայանայ, նոր Ընդհանուր Ժողովը կայացած կ'համարուի, մինչև անդամ եթէ ներկայ եղող անդամների թիւը որոշեալ թուից պակաս էր։

§ 35. Ընդհանուր Ժողովում, նոյնպէս և Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի նիստերի ժամանակ խնդիրները լուծւում են ձայների բազմութեամբ։ Իսկ ձայների հաւասարութեան դէպքում նախագահու է համարւում առաջնապետի կողմը։

Ծանօթ. Ներկայ Կանոնադրութեան վերահսկութեանց սրոշմունքները օրինաւոր համարելու համար պահանջւում է ներկայ եղող անդամների երկու երրորդ ձայների առաւելութիւնը։ Այդ սրոշմունքները գործ դնելու համար պէտք է Կովկասեան Փոխարքայի թոյլտուութիւնը։

V.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 36. Ընկերութիւնը ունի իւր կնիքը հետևեալ մակագրով. «Թիֆլիզի ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան»։

§ 37. Ընկերութիւնը ամէն տարի ներկայացնում է Թիֆլիզի հանգիստպահեստին իւր անցած տարուայ գործունէութեան հաշուի երկու օրինակ ուսումներն լրացուով։

§ 38. Ընկերութեան գործունէութեան ընդհատելու միջոցին, այդ դէպքում դուադարձած արտաքոյ կարգի ժողովը որոշում է Ընկերութեան բոլոր կայքը յանձնել Հայոց հոգևոր դպրոցներից մինին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՆ

ՅԱՐԳԱՄԱՑԱՐ ՏԷՐ,

Պ. Խմբագիր «ՓՈՐՁ» ամսագրոյ.

Ներկայ նամակովս ուղարկուած հարիւր մանէթը, որ հանդիսանակուած է ձկնային կապալառութեան Ծառայողների մէջ յօգուտ Վաստակաւորական աշխարհի սովատանջ Հայոց, խնդրում եմ ընդունել և հասուցանել ամենակարճ ճանապարհով՝ ուր հարկն է, որով կատարելու եք Ձեր վեհամ պարտաւորութիւնը Աստուծոյ առաջ՝ որոնք Ձեր միջնորդութեան են դիմում իւրեանց հնչեն լսմայով սատարել Հայրենի երկրի անբաղդ որդւոց չարաբաստիկ վիճակը ըստ կարողութեան ամրքելու։

Ա.Հաւասիկ նուիրատուաց ցուցակը. պ. պ. Դոլուխանեանց — 25 ռ., բժ. Արամեանց — 10 ռ., N N — 15 ռ., Խ. Ոսկանեանց — 1 ռ., Յակոբ Զոհրաբեանց — 3 ռ., Յով. Սուրգունեանց — 3 ռ., Տիկ. Սուրգունեանց — 2 ռ., Յով. Մերխմանեանց — 4 ռ. 20 կ., Յար. Սարգիսեանց — 1 ռ., Աբրահամ Սարգիսեանց — 1 ռ., Նիկ. Վլասեանց — 1 ռ., Ալիպուղալ Ախտամ օղլի — 1 ռ., Նէրս. Դարագեանց — 1 ռ., Վաս. Նիկոլաեվ — 1 ռ., Հար. Լօմիձէ — 1 ռ, Ագ. Բարամեանց — 3 ռ., օրիորդ ոմն — 1 ռ., օր. Մխաքանուշ — 1 ռ., եղբայր նորա Ստ. Արամեանց — 1 ռ., Յովսէփ և Աննայ Թամամշեանց — 6 ռ., Իվ. Յախնեանց — 2 ռ., Ասադ Նաղար օղլի — 1 ռ., Սարգիս Տէր Մարտիրոսեանց — 2 ռ., Յովսէփ Յովսէփեանց — 40 կ., Աստուածատուր Դաղարեանց — 2 ռ., N N 40 կ., Իշ. Թումանով — 5 ռ., Դ. Խալբաշեանց — 5 ռ., ընդ ամէնը 100 ռ.

Նուիրելով այս կնդծ յարգանաց հատասիքը

Մնամ յ. Ծ. բժ. Աքամեանց։

17 Փետր. Բաժիկ Պլօմիալ.

1880

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԽՄԲԱԳԻՐ

Վարդալով Ձեր պատուական Միամեայ Հանդիսի առաջին համարի մէջ տպուած սրտաշարժ հրաւէրն, որբազան պարտք համարեցի իմ կարողութեանս չափ օգնել մեր սովատանջ Հայաստանի ազգայնոց, ուղարկելով Խմբագրութեանդ քսան և հինգ րուբլի, խնդրեմ բարեհաճիք հասցնել ուր հարկն է։

Մ. Քալանթար.

Բաքու 1880 Փետր. 18 ին։
ի Տփխիս։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ ՅՕԳՈՒՏ ՎԱՆԱՑ ՍՈՎԵԼՈՑ

Պ. Կարապետ Եղեան.	1000	ռ.	
Իշխան Ամատունու «Արհեստաւորների Կրթութեան» կազմուած պարահանդէսից	404	ռ.	
Պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանցից	200	ռ.	
«Գործակատարների Կլուբից»	100	ռ.	
Թիֆլիզում բնակվող Հին-Նախիջևանի արհեստաւորներից ու մշակներից	52	ռ.	20 կ.
Անյայտ	100	»	»
Պ. Եփրեմ Յատուբեանց.	25	»	»
» Ա. Նաւասարդեանց	500	»	»
» Մ. Քալանթար	25	»	»
Բժիշկ Արամեանի ձեռքով հանդանակուած	100	»	»
Եւ առաջուայ	1500	»	»
Բոլորն	4006	ռ.	20 կ.

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱՍԻՐԱՑ—ԱՐԵՒԵԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

«Փորձի» համբաւրութեան ձեռքով հաւաքուած։

(Շարունակութիւն *)

Նախորդ ցուցակի ընդհանուր գումարը	353	ռ.
Պ. Խրիստափոր Գէորգեանց	6	»
» Յովհաննէս Տէր Սարգսեան	6	»
» Յովհաննէս Լազարեանց	6	»
» Գրիգոր Բաբաեանց	3	»
» Փարամազեանց Բարսեղ	3	»
» Խաչատուրեանց Գրիգոր	3	»
» Քալանթարեանց Բաղդասար	3	»
» Մելիանց Աղէքսանդր	3	»
» Աղաբէկեանց Յովհաննէս	3	»
» Մելիք-Միւրազեանց Նիկողայոս	3	»
» Վարդան Տէր Պօղոսեանց	2	»
» Մքրտիչ Յարութիւնեանց	2	»
» Վարդան Խուդավերդեանց	1	»
» Վարդան Մահակ-Թարոյեանց	1	»
» Հախնազար Դանիէլեանց	1	»

» Յակասակ Խուդավերդեանց . . . . . 1 »
» Նիկողայոս Դավլաթեանց . . . . . 1 »
» Յակակիմ Մերզոյեանց . . . . . 1 »
» Սահակեանոս Նազարեանց . . . . . 1 »
» Յովհաննէս Մերկելեանց . . . . . 1 »
» Սահակն Աբովեանց . . . . . 1 »
» Յովհաննէս Կակժայեանց . . . . . 1 »
» Մարզար Մովսէսեանց . . . . . 1 »
» Յարութիւն Դավլաթեանց . . . . . 1 »
» Գասպար Մուրադեանց . . . . . 1 »
» Աւետիք Մանուէլեանց . . . . . 1 »
» Մկրտիչ Նալբանդեանց . . . . . 1 »
» Առաքել Առաքելեանց . . . . . 1 »
» Յովհաննէս Դաւթեանց . . . . . 1 »
» Յարութիւն Օհանեանց . . . . . 1 »

Հետևեալ նուէրները հաւաքել է պ. Սարգիս Ղազարեան Նազարեանցը։

Պ. Սարգիս Ղ. Նազարեանց . . . . . 3 »
» Ղազար Նազարեանց . . . . . 3 »
Տ. Լիպէ Սանթրոսեանց . . . . . 3 »
» Սալոմ Նազարեանց . . . . . 3 »
— Անյայտ անձ . . . . . 3 »
Պ. Աբշակ Ի. Յովհաննեանց . . . . . 2 »
» Պաբսիկ . . . . . 2 »
» Աւետիք Աբգարեանց . . . . . 2 »
» Աբղար Վահ. Թամասեանց . . . . . 2 »
» Նիկողայոս Նիկողայոսեանց . . . . . 1 »
» Ղազար Տէր Սահակեանց . . . . . 1 »
» Մարզար Հասրաթեանց . . . . . 1 »
» Ղուկաս Աւետոսեանց . . . . . 1 »
» Անտոն Նարիմանեանց . . . . . 1 »
» Դէորգ Մուրադեանց . . . . . 1 »
» Ալի Պաբսիկ . . . . . 1 »
» Ալի Մահմադ Պաբսիկ . . . . . 1 »
» Սարգիս Սանթրոսեանց . . . . . 1 »
» Պետրոս Տէր Յակովբեանց . . . . . 1 »
» Գոզեր . . . . . 1 »
» Մազմանեանց . . . . . » » 50 կ.
Անյայտ անձերից . . . . . 8 » 25 »

Ընդամէնն . . 456 ա. 75 կ.